

Ltn

1555

1999

ԱՐԲԱՏ ՅԵՀՈՒԹԻՒՆ

# ՅՈՒՅԵԼԵԱՆԻ ՏԱՄԻ ԴԱՐՁ




զեղեցկութեամբ որպէս Թաղուհի . . . (էջ 33.)

L 5 n  
1555


ՄԱՍԿՈՒՑ. — 1893

Изд. пр. Павловск  
Фабричный котт  
Киринъ.



ԱՄԲՈՅ ԸՆԴԵԳԻՑԵՍՆ.

# ՅՈԲԵԼԵԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁ



ՄՈՍԿՈՒԱ.  
ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԻ ԴԱՐԵԱՆԻ.  
1893

Дозволено цензурою. С.-Петербургъ, 10 Февраля 1893 года.

## ՅՈՒԹԵԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁ.

Типографія Х. Бархударянъ, Мясницкая ул., д. насл. Ананова, Москва.

41555-60

ՀԲ. 2560

29071964

12

11



ՄԱՆՈՒԿ ՍԱԴԱԹԵԱՆՑԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

## ՄԱՆՈՒԿ ՍԱԴԱԹԵԱՆՑԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ն Ո Ւ Ե Բ.



Կայ է տստղը կէսգիշբային<sup>1</sup>, որ  
խոր զիշելներով ես ցողել եմ քո անդարձ  
կորուսոր, ով վաղաթառամ ըն-  
կեր: Որպէս սիրահար, որպէս նե-  
տահար ես հանապաղ պահել եմ  
քեզ իմ յիշողութիւնների մէջ. և այսօր ևս, այս երեսնա-  
մեայ յորելհանիս, քո նաղելի պատկերը մանուկ գեղեցկու-  
թեամբ նորից զարթնում է իմ առաջն: Ով իմ սիրելի,  
քնարիդ լարելը մի անդամ միայն թնդացին և էլեքտրա-  
կան հոսանքի պէս արագ անցան դոքա և լոեցին. վիշար  
կուրծքիդ մէջ սէրը շրթունքիդ դու վաղ հեռացար մե-  
զանից. բայց բնութեան օրէնքով ոչ մի ոյժ, ոչ մի զօ-  
րութիւն ձրի չէ անցնում: ահա կենդանի ևս դու և քո  
տաղանդը: Թող ուրեմն, անմոռաց ընկեր, այս իմ երկ-  
տող նուկը, որպէս երկու կաթիլ արտասունք, սրսկէ ու  
ցողէ քո չորացած գերեզմանը:



<sup>1</sup> Ակսակն է սկսվում առաջին դլիս մի տողը սորա հրաշալի  
թարգմանութեան «Դէմօն» բանաստեղծութեան Լերմծնտովի: — Մանուկ  
Սաղաթեանը վախճանուել է Երևան քաղաքում, 1866 թ. փետրուարին:



Նդունուած է, որ այս-  
պիսի հանդէսներին, ուր  
բազմաթիւ առարկելե-  
նիւթեր կան, խօսողները շատ  
չխօսեն և խօսեն թիթե ու ա-  
խորժելի ձևերով, որպէս զի ար-  
գյ հիւրերի պայծառ տրամա-  
դրութիւնը չխանգարուի: Ես  
կարծում եմ, որ խօսքս սովո-  
րականից աւելի լինի. հազարիցը  
մի անգամ ես պատիւ ունեմ  
տեսնել այսպիսի հայախումբ  
հանդէս, ասկա ես ի՞նչպէս խօսքս  
սահմանափակեմ կամ, ինչպէս  
ասում են, կարծ կապիմ: Այս  
պատճառով և խնդրում եմ  
Ձեր ներող լսողութիւնը և համ-  
բերութիւնը: Աղնիւ հանդիսա-  
կաններ, ես մոտածում եմ, որ  
ներկայ տօնախմբութեան խոր-  
հուրդը միայն լոկ ձաշկերշըթը  
չպիտի լինի, այլ մի վերին բա-  
րոյական շարժառիթ, որ զրաւել է այստեղ այսքան բազ-

մաթիւ մարգիկ: Ապա ի՞նչ է սորա խորհուրդը. այդ—  
մայրենի լցուի սէրն է, այն պարտաճանաշութիւնը, որ  
վերջին ժամանակները բաւական զարթել է Հայերիս մէջ,  
որով և այսօր իսկ կամենում են պատուասիրել զորա  
համեստ սպասաւորին: Երանի այն հասարակութեան, այն  
դարին, որ, ողեարուած աղինիւ ձգառմներով, զիաէ զնա-  
հատել իւր մշակներին առ հասարակ, և, դուրս գալով  
նեղ, փոքրովի և եսական շըջանից, ձեռն է մեկնել դէպի  
առաքինութեան գործը: Իսկ առաքինութիւնը, որպէս  
առում է Արիստոտէլ և բարի նախանձը դէպի հասա-  
րակաց բարին, և կատարեալ հայրենասիրութիւնն է: Եթէ  
այսօրուայ հանդէսը իւր արտաքին գեղեցկութեամբ հա-  
մապատասխանէր և իւր ներքին բովանդակութեան, մեր  
զիսակցութիւնը, մեր բարոյական պարագը միանգամայն  
վարձատրուած կ'լինէր: Յոբեկեանները սովորաբար սկզս-  
վում են և վերջանում՝ կերուխումով, որ մի թռուցիկ և  
փաղանցուկ յիշատակ է, բայց աշա Հայոց հասարակու-  
թիւնը միւս քաղաքների հետ միասին կամեցել են, որ  
այսօրուայ յիշատակը աւելի երկարատե լինի ներկայ և  
գալոց սերնդի քաջալերութեան համար: Դոքա ոչ պնդան  
մեր արժանաւորութիւնը աչքի տռաջ ունենալով, որքան  
զգալով ժամանակիս անհրաժեշտ ու հրամայական պա-  
հանջը, կամեցել են մի բարի գործ գործել մեր անունով,  
և սյս նպատակով հանգանակել են մի գումար հայկա-  
կան անտուն, անօգնական մշակների վեճակը թեթեայնե-  
լու: Սյս գումարը առ այժմս է, որպէս ցորենի կամ մա-  
նանեխի հատիկ, որ, ինչպէս առում է Աւետարանը, ընկ-  
նելով գետնի մէջ, մեծ արզիւնք է բերում: սա ածելով  
ու մեծանալով, ապա գառնում է մի ամբողջ հասկ երես-  
նաւոր, վաթսնաւոր և աւելի հատիկներով: Այզպէս է

լինում ընութեան մէջ և ամեն բան թէ նիւթապէս, թէ բարոյապէս, բայց նկատեցէք, որ սկզբում միշտ պատահում է հակառակութեան. պատճառ՝ մարդիկ, այս և այն կարգին սովորած, չեն կարողանում շուտով ընտելանալ նորին: Օրինակի համար միտ բերենք մեր լուսաւորութեան պատմութիւնը անցած վաթմանական թուականներին, երբ ժամանակի առաջաւոր մարդիկ, թողնելով կեանքից հեռու գարեւոր ճանապարհը, ձեռնարկեցին տարածել ազգի մէջ առողջ գաղտփարներ, վերաբերեալ նորադասակարական, հրապարակական և տնտեսական հարցերին: Առաջաւոր մարդիկ ասվում են նոքա, որոնք չեն գնում սովորական ընթացքով, այլ ընդհակառակն, պատառելով դորան, առաջարկում են ժողովրդին աւելի ուշալական, կենունակ և կենսընդունակ միջոցներ, և այդ պէս լինում են պատճառ դորա հողեր վերածնութեան: Հենց այդ ժամանակն էր, ձայն հնչեց Հիւսիսից զեպի առապատցած Հայաստան յաւիտենական յիշաւակի արժանի Ս. Նազարեանցի բերանով. սկզբում, ինչպէս այդ ամեն անգամ պատահում է, ժողովուրդը իրար դիպաւ, մթնեց, ունքերը կիսեց իւր վերանորոգողի վերայ. յետոյ սթափուեց, խելքի եկաւ, — և ահա սկսուեց նորոգման դործը: — Տեսէք, թէ ի՞նչ էր այն ժամանակուայ մամուլը, և այժմ ի՞նչ է: Այսպէս և երջանկայիշատակ Ռոստումանցը, հիմնելով «Մարդասիրական ընկերութիւն», — տեսէք, այժմ որքան է զօրանց թիւը ու նիւթական կարողութիւնը: Ես այս երկու ձիւղը յիշեցի միայն ցցց տալու համար, թէ ինչպէս ամեն բան, սկսուելով փոքրից, ապա աճում է, մեծանում և լայնանում: Բայց թէ ի՞նչ ուղղութեամբ և ճանապարհով են գնում զրանք, այդ մեր նալատակից դուրս է, ուրեմն և անտեղի մեղ խօսել

մանաւանդ որ և ընթացիկ հարցերը պյնպէս տաք են և կուսակցական ոգւով առաջարկուած, որ մինչեւ անգամ անաշառ զատաւորը, եթէ դատէր, կ'ընկնէր ծայրայեղութեան մէջ:

Թէ Հայոց ազգը, փոքր առ փոքր բանալով իւր մաւոր և հոգեւոր ոյժերը, առաջ է գնում, այդ անտարակցութիւն է. թէ մեր ազգի մէջ կան բաւական անձնանուեր մշակներ, անգամ օրական հացի կարօա, այդ նոյնպէս անտարակցութիւն է. բայց պէտք չէ յափշաակուել այդ հանգամանքից և գալարել, որովհետեւ մեր լուսաւորութիւնը գեռ շատ թշյլ է և նուազ, որպէս ջրի կաթիներ. իսկ անզիասութիւնը զօրաւոր, որպէս մի ահազին կործը ապառաժ: Երկար ժամանակ պէտք է սպասել մինչեւ որ այդ ջրի կաթիները, անընդհատ ծորալով ապառաժի վերայ, ապա կարողանան դորան Ճեղքել և խոր թափանցել մեծամասնութեան մէջ: Նոքա, որոնք համոզուած են, որ մեր զրականական ծիլերը և առաջազիմութիւնը շատ լաւ պայմանների մէջ են. Նոքա, որոնք բարեկնդանութեան հանդամանքներով փափկացած, ծափ են տալիս բանասիրական մեծահնչիւն թմբուկներին, որպէս մտաւոր շարժման յաղթութեան, — մեր միան են բերում հին ժամանակուայ առասպելախառն Հեկուների թաղաւորին, որին, պատերազմի ժամանակ, զօրավարները հաւատացնում էին, որ մեծամեծ յաղթութիւններ են անում թըշնամու վերայ, մինչեւ որ թշնամին վրատուաւ թագաւորի վրանը և մորթեց նորան:

Ով որ արժէքից աւելի է տալիս ազգին, մեր կարծիքով, իմաստուն մարդ չէ, և ով որ փոքրացնում է նորա արժանաւորութիւնը, — պարզերես չէ: — Ամեն բանին իւրը:

Չգիտեմ, որպիսի խօսքերով շնորհակալ լինել այն


Հեռաւոր հայրենակիցներիս, որ ուղերձներով, նուերներով, պատգամաւորներով ու որդեզրով այնքան քնքշութեամբ ու աղքասիրական թոթովանքով պատուեցին մեզ:

Զդիտեմ՝ որպիսի խօսքերով ողջունել և արգոյ հասարակութիւնդ, որ սիրողաբար հաւաքուել է այստեղ մեր նուասութիւնը յարգելու։ Վաթուն թուականից սկսած մինչեւ այսօր ես գործել եմ այդ հասարակութեան մէջ. այդտեղ են անցել իմ երիտասարդութիւնս, իմ ուրախութեան ու արտամութեան օրերը։ Հանապաղ յօրդորելով հայրենակիցներիս գէպի բարին, ճշմարիտն ու գեղեցիկը, ես ինձ Աստուծուց տուած շնորհովս քաղցլացրել եմ դոյա լսելիքը, արծարծել մայրենի լեզուն, զարթեցրել զիշերուայ թմրութիւնից։ — Այն, այն խորհրդաւոր զիշերին, որ պատել էր իմ հայրենիքի հորիզոնը, ես, որպէս նետահար թունակ, սրաամորմոք երգեցի հայի վիշար, և երբ որ երկնակամարին ցոլաց աւետաբեր այզը, ես արդէն ծնկաչոք աղօմք էի անում դորա համար, — և իմ աչքերիս ցոլացին աւետաբեր արտասունք։ Ահա գուցէ այս վաստակներիս փոխարէն մեր հասարակութիւնը կամեցել է պարտավճար լինել հետեւելով Խուսաց առածին։ — „Դոլց պլատէկմէ կրասեն“։ — Եւ ձգել է իւր լուման աղդի գանձանակը։

Ա՛զնիւ Տիկնայք և Պարոնայք. Ձեր այս, որպէս և միւս բարի զործերիդ համար ազգը Ձեզ ոչինչ չունի տալու. ոչ արեղակնափայլ-արծաթափայլ աստղեր, աջ ու ձախ կողքին շարած, ոչ կարմիր-ծիրանի-կապուտակ ժառպաւէններ, կուրծքին ծաւալուած, ոչ զոյնզպյն խաչեր, պարանոցին ձգած, և ոչ մի պատուի նշան։ Հայկական գմբազգ աղզը, գէպի Ձեզ զարձրած այսօր իւր արտասուախառն, բայց վեհ և աստուածեղին շնորհով


պապղուն աչերը, կարող է Ձեզ տալ իւր միակ գարեւոր շքանշանը, — և այդ է խաչը անձնուրացութեան, խաչ անձնաղոհութեան, որով խորտակվում է խաւարի իշխանութիւնը. — և այն ժամանակ աղզը Ձեզ կ'այ իւր բուն պապական—նահապետական օրհնութիւնը. — «Որդի ջան, շատ ապրես, մուրապիդ հասնե՞ս»։

1892 թ. Ապրիլի 9-ին.



Խաղաղ միա՛, մի՛ վրդովուիր. քոնն է դափնին,  
Խաւարի մեջ մեղ լցյս ծագող, Պռոմեթեոս:


Աշխարհ ծնար, և աշխարհիս դարձար մշակ,  
Բայց չը տեսար այս աշխարհից անդորրութիւն.  
Աշխատաւոր մարզկան բաժին է փշեայ պսակ.—  
Ահ, քրտնաշնն ոսկըններիդ խաղաղութիւն:



Կանապործ դու մահարձան քեզ  
կանգնեցիր,

Ոչ հողանիւթ, որպէս երկաթ կամ որձաքար.  
Հըզօր գըրչով, սուրբ վաստակով և անձանձիր  
Շունչ կճնդանի և յետ մահուան հանդիսացար:

Աշա նոր Ազդ և նոր Լեզուգ իւր ձիթենին,  
Քո ջրով բուսած, քեզ է բերում, ով Ստեփանոս,




Թօէ ինձ հասնի երանութիւն  
Այն լուսեղէն աշխարհի,—  
Մեր հոգէ ծածք, հոգէ անկիւն  
Քաղցր ինձ քան մասն Անմահի:



ԱԵՐՁԻՆ ՓԵՓԵԳ.

Երբ յուրա զիակդ, կեանքից զըրկուած,  
Մըտնի տապան, իմ անդին,  
Վերջին շունչըս քեզ եմ նուիրած,—  
Եւ ինձ տեղ տուր քո կողքին:

Թող Գաբրիէլի փողը հնչէ,  
Թող զայ աշեղ դատաստան,  
Իմ նազելի, մեղ այդ փոյթ չէ  
Սիրոյ զըրկում անսասան:



Սահում էր այնտեղ և կենդանի ջուր,  
Որպէս երեխի արտասունք մաքուր.  
Եւ զրախտահաւն թշփերի միջին  
Սաղմոս էր ասում Ամենակալին:

Եյսքան կախարդիչ, հրաշալի պատկեր  
Ոչ մի հողեղին, մի մահկանացու  
Իւր կեանքի օրին երբէք տեսած չէր,  
Եւ ոչ մեծութիւն զգացել Աստուծու:

Եւ մըտաւ հոգին խոստացած աշխարհ,  
Ուր մեր աշխարհի ոչ հոգս կայ, ոչ վիշտ,  
Ուր և մեծ, և փոքր միմեանց հաւասար,  
Եւ Աղօնայի<sup>1</sup> ներկայ նոյս միշտ:

Եւ տըխրեց հոգին հողեղին մարդու,  
Եւ ընտելացաւ Դրախտի վարդերին.  
Ուզում էր թողնել վիճակ կենսատու,  
Ուզում էր ասել իւր հըրեշտակին.

«Թո՛ղ ինձ, թո՛ղ. զընամ դարձեալ սյն կայան,  
Ուր ցաւ, արտասունք և տառապանք կան.  
Ուր քաղցրութեան հետ կայ և դառն բաժակ.  
Ուր օձ է սողում և վարդենու տակ:

«Սէր ունիմ սըրտումն, լայն այս երկնքից.  
Ամփոփել իւր մէջ չէ կարող զըրախտ.

<sup>1</sup> Աղօնա կամ Աղօնալի, բառ Երբ, նշանակում է Աստուծ:

## ՊԵՆԳՈՒԽԾ ՀՈԴԻ.

(Նուէր Ս. Նաղարեանցի լիշտառակին.)



ողի կապանքից հոգին ազատուած,  
Երկնքի անվերջ տարածութեան մէջ,  
Թուչում էր ուրախ. նորսն զրկաբաց  
Աղջունում էին աստղերը անշէջ:


Եւ քերովբէներ այնտեղ վեցթեսան  
Հանդիպում էին իրնկով բուրվա-  
ռով.—

Յանկարծ ցոլացաւ փայլակի նման  
Աթուն ոսկեղին, լի գոհարներով:

Հանդիսաւ էր ափրում մշտնջենաւոր  
Մարախիրոսների օթեաններում.  
Եւ սըրանց զլիին պսակ փառաւոր,  
Իւզպէս արեելք, հրավառ շողշողում:

Խաւար գիշեր է երկինք աստղալեց,—  
Եյնքան լուսաւոր երկրային իմ բախտ:

«Թող ինձ, թող, զինամ դարձեալ այն կայտն,  
Ուր ցաւ, արտօսունք և տառապանք կան,  
Ուր քաղցրութեան հետ կայ և դառն բաժակ,  
Ուր օձ է սողում և վարդենու տակ»:



### ՀԱՆԳԱԾ ՔՆԵՐ.



յսպէս, իմ  
իբնար, այս  
քան ժամանակ,  
Ոիրելով հանդիսան և դատարկութիւն,  
իբրև ժայռերից սեղմաւած մի գետակ,  
Մասցիր անշարժ: Խօսնակ զու շարժուն,  
Զըհնչեց լարերդ և ոչ մի գաշնակ:

Ապրում եմ մենակ և առանձնացած,  
Անմասն խառնաձայն ըզբօսանքներին.  
Ապրում եմ, որպէս մարդերից փախած:  
Աչք չունիմ նայել աշխարհիս կեանքին,  
Տատասկի նըման տապալուած դետնին:


Ո՞հ, մի կանչէք ինձ, որ ձեզ բան երդում  
Որ ձեր լսելիքն երգով փայփայեմ.  
Թէ ինքն Ապողոն նորից փունջերով  
Զարդարէր ճակատս, ես, յետ քաշուելով,  
Կասէի նորան. «Մընաս դու բարով»:


Ո՞սց կացան օրերս, անցաւ և գարուն,  
Երբ գեղեցկացած մանուկ ոյժերով,  
Երբ սըրաթուիչ արձըւի կորին,  
Թուչում էի ես հըզօր թեւերով,—  
Չըկար ինձ արգելք, չըկար բռնութիւն:

Ո՞հա և այս թերթս, սեղանիս վերայ,  
Առաջ որ գըրիչս թաթախում էի, —  
Դասնում էր իսկըն կենդանի վըկայ  
Սըրտիս վեղմունքին, և մարդարէի  
Խօսում էր լեզուով, որ այժըմ չըկայ:

Ո՞խ թէ և մեր սիրտն ծառի պէս լիներ, —  
Չըմեռը կանաչ տերեկց թափուէր,  
Ամսուը որ գար, — մանուէկ աշխայժով,  
Բանաստեղծական կլեջներով  
Իւր թմրութիւնից նորից ըսթափուէր:

1892 թ.





## ԱՆԴԻՆ ԳՈՀԱՔ.

I.


Ականս, աղաւնեակ, որ դու չես ծընած  
Աշխարհստեղծութեան վեցերորդ օրին,  
Երբ Ճարտարապետ Արարին Աստուած  
Կանանց վափկութեամբ նկարեց Եւային.  
Դու այն ժամանակ կ'լինէիր պատկեր  
Եւ չնաշխարհիկ սիրոյ գաղափար.  
Դու անսամզ երկինք, նա ամս ու ստուեր  
Եւ ոչ հողեղին ոք քեզ հաւասար:  
Որի սևաթօյր մաղերը կիտուած  
Ծալք ծալք ցրուած են բարակ ուսերով

Եւ վառ աչքերի դիւթող հայեցուած  
Երբեմն սրտակից փայլում է սիրով,  
Բայց և երբեմըն, ամսի ակս թխալած,  
Կրակ է թափում այրող կայծերով:

II.

Անարատ որպէս չըշրնձած ցորեն,  
Մեղսապարտ երկրի մաքուր քաւարան,  
Ա՛խ թէ մեղքերը քեզ չպաշարեն,  
Եւ դու մնաս իմ միակ զղարան:  
Թեթև փչելով մաքրափայլ օդի,  
Քո անուշաբջյր շունչն եմ ես զգում,  
Եւ խոխոջաձայն խաղում առուակի  
Քո մեղմ, սիրալիր զրոյցն եմ լսում:  
Ծառի տերեներ, հեղեկ շարժուելով,  
Նաղուկ ոտերիդ յիշում են շարժուած.  
Եւ ծաղիկները, քեզ բարեւելով,  
Ուզում են ասել, որ դու ես Աստուած.  
Դու համեստ աստղիկ, ամաչկոտ լուսին,  
Դու իմ խնդութիւն և վիշտ իմ խորին,  
Դու իմ պայծառ օր և ախուր զիշեր,  
Իմ միակ կեանքում դու միակ ընկեր:

1891 թ.





Յ. ԵՒ Թ. ՏԵՐ-ՑԱԿՈԲԵՑՆԵՐԻ  
ՀԱՐՍԱԾԻՔԻ ՔԱՍԱՀԻՆԳԱՄԵԿԻՆ.

Լէս զիշեր է: Լուռ սենեկում  
Հանդարտ քայլով փոքր ինչ զբաղուած,  
Ման եմ գտվես, և անկիւնում  
Տեսնեմ: Քնարս պատին կախած:

Տերեի պէս դողդողալով,  
Ես մօտեցայ հին ընկերիս.  
Խոելքը թռաւ, բայց մեղմ ձայնով  
Կանչեցի ես, ողջոյն քնարիս:

Առայ նորան, և խնդագին  
Փայփայելով, լաւ մաքրեցի.  
Կարծեմ, լարելը պակաս էին,  
Բայց տակաւին դեռ արծաթի: —  
Եւ արծաթի տարեղարձին  
Այս տողելը ինձ հնացին: —

Բաղդաւոր զոյգ. ու մտաքաշխարհ  
Սիրտ սրտի հետ և միաբան:  
Սիրով գնացիք ձեր ճանապարհ  
Լուսապայծառ աստղի նման:

Որ մանկութեան առաւօտից  
Արդար վաստակ էք վաստակել  
Որ անտրտունչ այս աշխարհից  
Երբէք աշխարհ չէք անիծել:

Սէր զեղեցիկ սէր հոյակապ,  
Սմեն տեղ քո շոնչն եմ լսում:  
Դու մարդկութեան հզօր շաղկապ  
Սմեն լաւ բան դու ես ստեղծում:

Եւ այդ Զեր սէրն Աստուած օրհնեց,  
Նայեց երկինք և հաշտ աչքով:  
Թեթև զեփիւռն Զեղ ողջունեց, —  
Եռայ և կեանքն բոլոր շնորհով:

Արեելքի շողքը շողաց  
Աղամանովի դոհարնելով.  
Շողաց և շաղը շողշողուն  
Մարդարտափայլ կաթիլներով:

Շողաց և ծովըն ծիրանի  
Երկու չքնաղ նաւորդի հետ.  
Մինը պսակեալ իսկ թագուհի,  
Միւսն անխոնջ ճարտարապետ:


Քաջ նաւորդներ. Զեր գալն բարի.  
Զեղ գեղեցիկ պսակ արձաթի.  
Այս օր հանգէս ամուսնական.  
Կեցցէք, կեցցէք այժմ և յաւիտեան:

1891 Խ. 28 լուն.



Զ Ա Հ Ե Բ .


\*\*\*



Եռաւ իմ մուզան, հանգաւ և կրակ,  
Անտառը լցուեց չոր տերեներով.  
Երկինքը ծածկուեց, փախաւ արեգակ,  
Էլ ես չեմ ապրում ուրսախ երգերով:  
Եւ աստեղազարդ բոլորակ գմբէթ,  
Եւ արծաթափայլ ջրերի խոխոջիւն  
Սյլես չեն խօսում բանաստեղծի հետ,  
Եւ ոչ այցելում աւերտուած իմ տուն:  
Այժմ ինձ մնաց միայն փշունքներ,  
Մայր մտաւ ահա և նշոյլ վերջին.—  
Հանում եմ զրահս, և զէն, և զարդեր.  
Յանձնում եմ գորանց մանուկ սերնդին:

Բայց թող հայկական որդիքն իմանան,  
Որ իմ սուզո նոյա վիճակն է եղել.  
Որ երբէք վախլուկ զինուորի նման  
Թշնամուս առջև վահան չեմ ձգել:  
Չեմ երկրպագել ես ոսկի հորթին,  
Եւ ոչ կուռքերին պաշտել օտարի.  
Այլ միշտ հոգեոր կարօտ ծարաւի,  
Տուել եմ արժանն ամեն մի մարդին:  
Չեմ տաշել գաղաղ, ու մատաղ կեանքի  
Կանաչ ծառի պէս ծաղկել են յոյսեր:  
Սրսկել եմ զբանց ջրով կեսզանի,  
Որ գալոց ազգին լինին պտղաբեր,

1890 թ.



## ԲԵՆԵՍԵՂԾԻ ԴԱՄԲԱՆԻՆ

(Նուէր Մ. Սաղաթեանցի լիշտառակին).

Հա արևմուտք և օրհասական,  
Որպէս զիշերուայ թանձրամած խաւար,  
Վրաստուին ինձ. մահիճս իմ կալան.  
Ոչ մի յոյս չմնաց նոր կեանքի համար:  
Կեանք, անյշշ երազ մատաղ օրերիս,  
Սիրուն ցնորքիդ անցաւ ելեէջ.  
Եւ վերջին լարը մեռնող քնարիս  
Պատրուտեց, որպէս սիրաը կուրծքի մեջ:

Երբոր ինձ թաղեք, մի՛ արտասուազին  
Ծաղիկներ ցանէք դագաղիս վերայ.  
Ի՞նչ հարկաւոր է անշունչ դիակին,  
Որ մահից յետոյ սիրոյ կուռք դառնայ:  
Մանուկ օրերից, յուսով սիրավառ  
Երգ ես երգեցի ոգևորութեան,  
Բայց ինձ ըլլսեց գոռող այս աշխարհ.  
Վայ ձեր վարդերին, որ ահա ըսկան:

Եւ թող բնութիւնն՝ միակ գեղեցիկ,  
Ողջունէ երզչես վերջին հրաժեշտին,  
Եւ երասխաջուր մարգերի ծաղեկ  
Անթառամ՝ խընկէ հայրենի այդին:  
Աղատ թուխպերից, թող պայծառ շողայ  
Արեգն երկնքին միջօրէական,  
Եւ յաւէրժ մատաղ կեանքի պէս խաղայ,  
Որ լուսաւորէ իմ կորած դամբան:

1890 թ.



## ՅԱՐԵԼԻՆԱԿԱՆ

ՏՊԱՀՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

. .

Իր ողջունական ուղերձները, ներ-  
շնչուած աարօրինակ ոգեսորու-  
թեամբ, Զեր բուռն ծափահարու-  
թիւնները, քաղցր և հրապուրիչ  
արձագանք տալով սրտիս, այնպէս  
շարժեցին ինձ, որ հաղիւ թէ կա-  
րողանամ չափաւորել հիացքս և  
պալտուպատշաճ կերպով յայտնել  
Զեղ իմ լիամասն չնորհակալու-  
թիւնը: Քամին այնպէս արագ անցնում է արեւելքից արե-  
մուաք, և ընդհակառակն, որ սորանից մի փոքր առաջ  
ինձ թւում էր ամեն բան հանդիսաւ ու խաղաղ, այնպէս  
պարզ էր երկնակամարը, որ ես կարծում էի հանդարա

տրամավրութեամբ բացատրել արգյ հանդիսականներիդ  
առաջև իմ երկար գնացած ձանապարհի տպաւորութիւն-  
ները: Բայց ափսօս, որ այդ բոլորը իրար անցաւ, և խախտ-



ուեց գաղափարներիս շարքը: Ես ինձ համարում եմ բաղ-  
դաւոր, որ ունիմ Ձեզ ափէս սիրողներ ու սիրելիներ, այդ  
ինձ համար է մի բարոյական միմիթարութիւն, և անջնջելի  
կ'պահեմ սրտիս խորքում, մինչև կ'փակի աչքերս յաւի-

տեսն և կ'յանձնի հողին հողեղինս: Սակայն մեծ ախտու-  
թիւն կ'պաշարէր ինձ, եթէ իմ անունովս էք եկել այսաեղ  
և ոչ մայրենի լեզուի. մայրենի լեզուի շնորհիւ ևս մարդ եմ  
դառել, ստացել եմ վարկ ու հասարակական նշանակու-  
թիւն. ուրեմն թոյլ առւելյէք կարծել որ այսօր հայկական  
լեզուն է հրաւիրել Ձեզ այստեղ իւր համեստ մշակին  
պատուասիրելու: Արդիօք այդ լեզուն ի՞նչ ապագայ է պատ-  
րաստում մանուկ սերնդին. արդիօք կ'ստանա՞յ դա նոր  
ոյժեր ու միջոցներ, որ լինի ոչ հրամայելի, այլ հրամա-  
յող. գեղեցկութեամբ որպէս թազուհի, հաղին ծիրանի  
զգիստ և զլիին երեքտակէն վարսակալ խոշոր մարգա-  
րավ շարած: Ա՛հ, թէ կարողանայի անյայտ ապագայի  
վարագյրը պատռել և տեսնել թէ ի՞նչ է սպասում  
այնտեղ նոր սերնդին: Ապագան անգուշակելի է, բայց  
ներկայի սազմը, ներկայի գործող ողին կարող են մի  
փոքր պարզել զորա հորիզոնը: Այսպէս հեռուից երեսող  
նատի կայմից ու առագաստներից գժուար չէ նշմարել, որ  
դա, նետի պէս ճղելով ծովի ջրերը, կամաց կամաց մօտե-  
նում է խաղաղական նաւահանգստին: Այսպէս և այսօր.  
Նայելով այս նազելի մանուկ սերնդի վերայ, զինուորուած  
սքանչելի լեզուով, այնտէս է խօսում ու գործում, որ  
կարծես թէ կարող է անդրագայլել ևս ոչ միայն ծովի,  
այլ և ցամաքի արգելքներից: Այս պատճառով ևս ոչ  
այնքան յօժար եմ յետ նայել գէպի անցածը, քանթէ  
առաջ գէպի ապագան. անցած շրջանս անցել է յաւի-  
տեան. ես այնաեղ եղել եմ լոկ սերմանացան, բայց թէ  
ցանած սերմերս ի՞նչ հողի վերայ են ընկել, այդտեղ ևս  
զատաւոր լինել կարող չեմ: Եւ եթէ ջատագովիի իմ  
անձա, միայն համեստաբար կարող էի նկատել, որ իմ  
զիտաւորութիւններս եղել են բարի, սերս անխարժախս  
գէպի նոր սերունդը, որի խոստովանութեամբ և կայացել  
է այսօրուայ տօնախամբութիւնը:

Երբէք ձեռնամուխ չեմ եղել մեծութեան և ոչ  
երկրային կուռքերից աղաչել ողորմութիւն. չեմ գեղերել  
մեծամեծների դրան, որ բարձր երեամ, և ոչ այցելել եմ  
հարուստներին այն յուսով՝ որ նոցա սեղանից վայելիս:  
Իմ միակ սենեակս, իմ ողեպահիկը աւելի եմ համարել  
այն բազմախորտիկ և ոսկեզարդ գալիքներից: Ես մտածել  
եմ. մի օր, որպէս մահանացու, կընկնեմ, կ'մեռնեմ. իս  
բարեսիրտ աշակերտները, որոնց սպասաւորել եմ կարո-  
ղացածիս չափ, գոնէ «Ողորմի Աստուած» կասեն ինձ:  
Եւ արդարե ես սիրել եմ դորանց. Սորա համար, հասա-  
րակութիւնս ողջունելուց յետոյ, ես անմիջապէս կամե-  
նում եմ գառնալ գէսի հրեղէն գասը մատաղ սերունդնե-  
րի, որոնք ծաղկափթիթ գէմքերով ծաղկաբար շարուել  
են այստեղ խումբ խումբ, այս փառաւոր և հանդիսական  
գալիքում<sup>1</sup>:

Ուսանող սերունդը ամեն ազգի ապագայ յոյսն է.  
ուսանող սերնդին սեպհական է վերանալ-բարձրանալ  
սովորական /կեանքից և համնել այնպիսի կատարելու-  
թիւնների, որ անձանօթ են զին շրջաննին: Դա խսկապէս  
ներկայացնում է մի տարր, որ զգիտէ հանգստութիւն.  
միշտ գտնուելով գործողութեան մէջ, զամարմնացնում է  
մարդկային գաջնակցութիւնների ամենաթարմ մաս  
Սորա համար ուսանող սերունդը ձգտում է նախ և  
ուաջ արդար և լաւ մարդ լինել ըստ որում լաւութե.  
և արդարութեան գաղափարը գտնվում է ընդհանու-  
մարդկութեան մէջ և ոչ թէ սեպհականութիւն է մի  
մասնաւոր աղքի: Հէսց այս հասկացողութեան մէջ է  
զրուած այն մեծ առաջադիմական ոյժը, այն մեր ժա-  
մանակակից ողին, որ մի առանձին համակրութիւն են  
ընծայում վերաճող սերնդին: Կրթուած ժողովուրդ,

<sup>1</sup> Իմ ընկեր և բարեկամ Յ. Տէր-Յակոբեանի տանը:


կրթուած հասարակութիւն այնպիսիներն են համար-  
վում, որ լաւ են ըմբռնել այդ ճշմարտութիւնը և հա-  
նապազ իմացել են քաջալերել մանուկ սերունդները  
թէ նիւթապէս, թէ բարցապէս: Հասարակութիւնը, որ  
հրաժարվում է հաց ու ջուր տալ նոր սերնդին և ըստ  
ամենայնի լուսաւոր հոգաբարձու հանդիսանալ դրան,  
այդ նշանակում է որ դա չէ կամենում, որ իւր պարտիզի  
այդ նշանակում է որ դա չէ կամենում, որ իւր պարտիզի  
տունկը աւելի բարձր աճի ու կանաչի, այլ որ չորանայ  
զին ծառերի հետ և գետին տապալուի: Ա՛խ, եթէ այդ  
զեղեցիկ մարդկային անհատները, այդ հայաշունչ-հայրե-  
նաշունչ ծաղկինները պահէին խրեանց այսօրուայ գոյնը,  
անաշահօտ բուրգառով խնկէին ազգային յիշատակարան-  
ները և երբէք չխառնուելին ճահճային բոյսերի հետ: Ահա  
որպիսի ծանրակշտու խորհրդագութիւններ է շարժում մեր  
մէջ այստեղ ներկայացած սերունդը և մանաւանդ ուսանող-  
ների խումբը: Ահա թէ ինչու համար մայրաքաղաքիս հա-  
սարակութեան վերայ բարյատին պարաք կայ օգնութիւն  
հասնել պակասաւոր ուսանողին, ընդունել գորան, փայփա-  
յել և նիւթական կարիքը թեթեւացնել: Այդպիսի ուսանո-  
յել, կինդանի արձագանք գտնելով ազգայինների մէջ, աւելի  
ուրով կ'կապուի ժողովրդի հետ, որի որդին է նա, այդ-  
պիսի ուսանողը, ասում եմ, ապահոված իւր հայրենա-  
կիցների օգնութեամբ, ապագայում կրինսապատիկ յետ  
կ'զարձնէ իւր առածքը, լուսաւորելով ժողովուրզը և  
կենցազուած զիտութիւններ տարածելով դորա մէջ: Զմո-  
ռանակը և այն հանդամանքը, որ մայրաքաղաքիս ուսա-  
նողութիւնն է եղել նախընթաց կարապետ, պիօներ, հա-  
յոց թատրոնական բեմի: Յիսնական թուականներից սկսած  
մինչեւ այսօր նա իւր անընդհատ ներկայացումներով կեն-  
դանի է պահել մեր մէջ մեր յարաբերութիւնները ան-  
ցածի և ներկայի հետ, միայն թէ այդ յարաբերութիւն-  
ցածի և ներկայի հետ, միայն թէ այդ յարաբերութիւն-

աւելի խոր, իւր զիտութեան արժանի, ներկայացումներ տար հայոց կեանքից ու զրականութիւնից: Աշա և սոցա անմօսաց նախորդները՝ Արքիւն, Նազարեանց, Էմին, Պատկանեանք և շատերը, նոյն համալսարաններում կըրթուած, այսօր հոգեոր աչքով նայում են հայկական լեզուի հանդէսի վերայ և յորդորում են ձեզ սերտ սիրով միանալ իւրեանց կրտսեր եղբայրների ու որդեակների հետ: Ես շատերի հետ չեմ կամենում հաստատել որ մեր հայրենասիրութիւնը սկսվում է մեր զիխից և համառում միայն մինչև մեր ջէրը, և երբ այդ հայրենասիրութիւնը ուղղում է և ջէրը ընկնել այնուհետեւ հայրենասիրը թողնում է իւր սիրած հայրենիքը և փախչում: որովհետեւ նա համակրում չի, որ այդ անաքանդ հայրենասիրութիւնը չէրին է զիպչում: Ըսդհակառակին, Մոսկուայի հասարակութիւնը երեք յետ չի մնացել բարեգործական նպատակներից, և մենք ներկայ զիտուածում միայն ցանկանում ենք նորան աւելի վեհանձն և առատաձեռն լինել, որպէսզի մեր համալսարանական փոքրիկ նաւակը փոթորկի չպատահէ զիտութեան ասպարիզում և իւր երիտասարդ վերելեակներից ոչ ոքի ծովի մէջ չձգէ:

Քաղցր է ինձ հանդիպել Ձեզ նոր սերունդ, այս մտաւոր ցնցման միջոցին, երբ մի փոքրիկ ածու, մի փոքրիկ ազգ, ամբողջ գարեր զլորելով, բայց գարերի հետ չպորուելով, կարողացել է տարածել իւր մէջ զրազիտութիւն, կազմել դպրոցներ և զվրանոցներ, հիմնել բարեգործական ընկերութիւններ և հասարակական շահերը անձնականից վերադասել: Սրտաձմշիկ պատկեր է հանդիսանում մեր առաջեւ, որ զրագիտութեան վերայ աշխատել են ոչ միայն կրթուածները, այլ և անկիրթ ժողովուրպը. և չուխան, և սիւրուուկը, միմեանց ձեռը մեկնելով, զարմանալի համերաշխութեամբ առաջ են տարել ազգային լուսաւորութիւնը:

Այդ համերաշխ գործակյուննեան շնորհիւ առաջացել է և մեր այսօրուայ հանդէսը:

Ես իմ մէջ չեմ գտնում լեզու և հոգի, որ կարողանային թարգման լինել այն հրեղէն նիւթերին, որ կիտուած են այստեղ զանազան տեղերից. լուսաւորութեան կենդրոնները, սկսած Ռուսաց և միւս համալսարաններից, հայոց զպրանոցներից ու գպրոյներից, քաղաքներից ու գիւղերից,—այսօրուայ տօնին բոլորը մասնակից են: Այդ տօնը օրհնեց և հին հայաստանի վիապասանների սերունդը՝ Ալեքսանդրուալուսի աշղները. և օրհնեցին առաջին սիրոյ սրբութեամբ և խորութեամբ. նոքա կըր աչքով աւելի անսան ու զգացին, քան թէ շատերը որոնց երկու աչքը ևս բաց է: Նոյնպէս հայկական ուսումնական և բարեգործական ակումբները իւրեանց հեղինակներով, հայկական պարբերական մամուլը և հայոց համայնքը, ուղերձներով, պատկերներով, ոսկէտառ համարներով, լուսանկար ալբոմներով ու արձանագիր զրուագներով, առանձին համակրութեամբ պատուասիրել են ներկայ հանդէսը: Իոյց հեղինակներից մինը, որ արդէն ծածկուած է ծերութեան ալիքով, իւր գեղարուեստական նկարագրով, ազպյութեան հասակիս նուիրած, աւելի կախարզեց հանդէսի ուշագրութիւնը.—գա Պերճ Պոօշեանցն է, որ, վաթմնական, թուականներից ասպարէզ մոնելով, մինչև այսօր հաստատ ձեռքով կրում է աշխատութեան զրօշակը: Լաւ հասկանալով որ ով զնում է բարցյական յաղթանակների զժուար ճանապարհը, նա չպիտի որոնէ այնտեղ գալար մարգագետին, Պոօշեանցը և այսօր չէ յոգնել իւր երկար ճանապարհի վերայ. գալոց օրերի արշալցուր նորան տալիս է նոր ոյժ ու տոկունութիւն չգալպարել սկսած զործից. բայց իւր արշալցուր արդէն հանգել է: Կարիքների և աղքատութեան մէջ, չպտնելով արձագանդ իւր հայրենակիցների սրտերում: նա հանդարտ սպասում է իւր կեանքի արևմուտ-



քին: Արդարեւ, այդ համեստ գործիքը այսօր կարօն է օրական հացի. նա չէ աղաղակում իւր կարօտութեան մասմին, և մենք չենք լսում, որ մեր արժանաւ որը անարժան վիճակի մջ է: Վազուց հարկաւոր էր հայկական խօսքի սիրողներին «Սոս և Վարդիթերի» հեղինակին պսակ հիւսել նցյն սաղարթագեղ սօսուց և վարդի թերից. բայց գլխաւորը՝ մտածել նորա նիւթական ապրուստի մասմին: Եւ իրաւի. ի՞նչ կարող է անել վարդի պսակը, երբ կարօտութեան փշելը ամեն կազմից ծակոտում են գորան: Չենք կարծում, որ ոքմին կարեկցութեան օրէնքին ընդդիմանայ. սակայն, դժբախտաբար, շատերիս նշանաբանը այսպէս է. ամենամեծում բաժանուել ամենափրառում միանալ:

Փոխանակ այսքան սիրողական ցոյցերի խմում եմ  
արտասունքիս ուրախալից բաժակով՝ նոյա կենացը, որոնք  
արդարախօս և մաքուր պրաերով՝ ողջունեցին մայրենի  
լեզուի հանգէսը. խմում եմ և նոյա կենացը, որոնք յանձն  
առան տաժանական աշխատութիւն հայրենիաց փառքի  
համար. որոնց կեանքը կրթուած է անընչափաբար ծա-  
ռայել ծմբարտութեան գաղափարին, բարի և աղնիւ ձրգ-  
տումներին:—Կեցցե՞ն, կեցցե՞ն, և կեցցե՞ն յաւիտեան:

Նյոն բաժակը, շնորհապարտ ցողով լցուած, ևս բարձրացնում եմ և այն փոքրիկ խմբի կենսայը, որ սորանից հինգ տարի առաջ հաւաքուել էր մեր յատուկ բարեկամ՝ Ստեփան Մամիկոնեանի տանը՝ իմ քսանեհինզամեակը աօնելու: Թէև այն ըթանը չուներ այսօրուայ շուկքն ու պայծառութիւնը, բայց շաղկապած էր սիրտ սրտի հետ՝ բարախուն և զդայիւն, որքան զգալի է ծնողի սիրակաթհանքը լրացըլը երեխի երկթերթի շրմունքին:

Եւ որովհետեւ երեսնամեայ յօբելեանը է և երեսնամեայ հաշիւ անցած ժամանակի, թոյլ տուէք ինձ յիշել այստեղ և նոյսա, որոնք անձնուրաց քաջադրութեամբ

պատերազմնեցին խաւարի դեմ՝ որոնք տոկուն և զիմացկատ  
ուսերով տարան այս աշխարհից զրկանք ու զբարտու-  
թիւն և, լուսաւորութեան լատեր վառելով ժաղովրդի  
մէջ, կոեցին մեր առաջարկմութեան շղթայաշարը, և ի-  
րանք հանդան փայլուն հրատի պէս: Նոքա մեռան բարի  
յիշատակով,—և կեցը՝ նոցա բարի յիշատակը:

Խօսելով ուղերձների և ձառերի մտաւոր բովանդակութեան մասին, անկարելի է չնկատել մի բան, որ ցորենի հասկի պէս անդադար շփում է ընթերցողի աչքերը. այդ այն խայտաճամուկ յարմարազրական և քերականական ձեւնեն են, որ այստեղ-այնտեղ նշմարվում են նոյն ուղերձների ու ձառերի մէջ: Մեր ուղղագրութեան զգեստը, ըստ երեսութին լաւ ձեւած ու կարած, ամենեւն չունի, ինչպէս ասում են, ուսումնական աստան և կարերի միջեց դուրս են պրծնում դորա սպիտակ թեկերը: Սյոստէս, օրինակի համար, միւնցն բառի ու բայի մէջ, նոյն ժամանակում ու եղանակում, պատահում են զանազան զրութիւններ, որպէս լովո-ճ, լոռո-ճ, լոռո-ճ. լոռ-ճ, լոռ-ճ, լոռ-ճ. իւ լոռ-ճ, իւ լոռ-ճ, լոռ-ճ, լոռ-ճ, լոռ-ճ. վական լոռ-ճ և լոռ-ճ լոռ-ճ լոռ-ճ. Ասուած, Ասուած. Ճանական, Գրահանական, և այլն: Մարդ միանդամայն զարմանում է, թէ ինչպէս մի սերունդ, մի ժողովուրդ կարող է դորանցով կրթուել ու վարժուել: Յայնի է, որ կանոնաւոր ուղղագրութիւնը մեր ժամանակում մի կարեոր մանկավարժական խնդիր է զաստիարակուող սերնդի համար, իսկ մեր զրութեան եղանակը, ինչպէս ահմանում էք, այնքան անհկայիւն է և անհաստատ, որ երեխան, զիրքը առած-չառած, իսկըն նկատում է հակառակութիւն և ընկնում երկար ժամանակարհի վերայ: Տառերի ծագումը, թէ դոցա ուղղագրութեան, թէ արտասանութեան վերաբերութեամբ, այնքան փոփոխութիւնների են ենթարկուել, որ միանդամայն հեռացել են իւրեանց նախախիպից և

անկարելի է գորսանց վերականգնել ինչպէս մտածում են Հայերը: Իսկ ինչ որ վերաբերում է հիւնի զործածութեան, մենք պէտք է ասենք, որ զորա փոփոխութիւնը միշտ եղել է բայերի վերջաւորութեան մասին և ոչ արմատական բառերի, որոնց յարմաբազրութիւնը, հին դարերից սկսած մինչեւ մեր օրերը, այնպիսի քաղաքացութեան իրաւունք են ստացել, որ ոչինչ հարկ չկար զորանց յեղաշրջելու: Միտ դնելով ժողովրդական կենդանի բարբառն, մենք տեսնում ենք որ մասնիկներս ի՞ւ և չը չեն հնչվում երկայն, ամսնակով, այլ սուր և սուր որպէս թէ բառի հետ միացած. չ ճնայ և ոչ իւ ճնայ, չ ճնայ և ոչ ճնայ: Տին զբականութիւնը բացասական մասնիկը և միշտ միասին է զրել թէ բառերի հետ, թէ բայերի հետ. Եթեաւ վայ:

Վերջատպէս ի՞ւ և չը մասնիկների միասին զրելը ունի և ուրիշ պատճառ. նոր լեզուների արտասանութիւնը հիմնուած է բառերի սղման, ամփոփման ու արտգաշարժութեան կանոնի վերայ, որ մի յայտնի լեզուաբանական օրէնք է, որով և այդ լեզուները առհասարակ զանազան վում են իւրեանց հին, կլասիկական ձեւերից:

Բացասական ապառնին ուղեղ չէ, երբ զրում են վէտ լի, վէտ լի, վէտ լի. այլ պէտք է զրել վէտ լիւ վէտ լիւ վէտ լիւ որովհետեւ այս ձեւը, որպէս կարծում եմ, առաջ է եկած ապառնի զերբայից լի վերջաւորութեամբ, որի միւս օրինակը կ'լինի. վէտ լուսու, վէտ լուսու, վէտ լուսու: Ածականս գրական, ինչպէս շատերը գործ են ածում անյարմար և անմարմելի է: Գրոց լեզուում վարփում է որպէս գոյական, և կարող է զնալ փոխանակ լուտրագործ բառի. իսկ որպէս ածական, որ սակաւ է պատահում, նշանակում է գրականու որ ամենենին ուրիշ իմաստ է տալիս: —Պէտք է ասել գրականական, որպէս գրական—գրականական: Զե և չէ բացասականների երկու

ևս ձեւերը դործ են ածվում: թէև աւելի կանոնաւոր է չէ, բայց աւելի կենդանի է չէ: Համառօտելով մեր ասածը, զալիս ենք այն եղբակացութեան, որ մեր ուղղագրութիւնը, որքան այդ հնարաւոր է առ այժմս, միօրինակ լինելու համար լաւ է պահպանել այս ձեւերը.

Կլսեմ և ոչ կը լսեմ.

Չլսեմ և ոչ չը լսեմ կամ չ'լսեմ.

Չեմ լսիլ և ոչ չեմ լսի.

Սատուած և ոչ Սատուած.

Դրականական և ոչ դրական:

Իսկ կլսաւորական բայերի ձեւերը լավուած կամ լավուած լավուած կամ լավուած է հեղինակների ընտրութեան, թէև ևս ինքս առաւելութիւնը տալիս եմ լավուած և լավուած ձեւերին:

Մենք այդ հարեւանցի նկատեցինք այստեղ միայն հասարակաց զիասութեան համար. մեր գործն էր լոկ զեկուցանող լինել և ոչ լուսաբանող. հետեւբար մենք միտք չենք ունեցել պարապել քերականական կամ այբուբենական թուաբանութեամբ:

Ցանկալի չէ, որ և մամուլը երկար զբացուի այդ հարցերով: Զբաղուել տառերով և զբաղեցնել զորանով ընթերցող հասարակութիւնը նշանակում է լեզուի վերայ աւելորդ բեռներ բարձել անդամատել զորան և զրկել այն գեղարուեսատական և պրակտիկական պայմաններից, որոնց աշխատում է համեն զրականութիւն: Ուղիղն ասեմ, ես ևս մատղիր էի մեր բացականչական և հարցական նշանները զործ ածել եւրոպական ոճով, զնելով զորանց նախադասութեան վերջին և ոչ բացականչելի կամ հարցանելի բառերի վերայ, որովհետեւ բառը ինքն ըստ ինքեան միայն լոկ նշանակիչ է տուարկայի և չէ յայտնում մի կապակից իմաստ: Կարելի է կանչել կամ հարցնել ամբողջ նախադասութեամբ, և ոչ առան-

ձին բառով: Այս տարրական կանոնը քերականական վերլուծութեան ծանօթ է ամեն երեխայի առաջին և յետադայ դասարանների, ուրեմն և աւելորդ է խօսել դորանց մասին: Մենք միայն մանկավարժական նպատակով, խնայելով մեզ յանձնուած երեխային, ձեռք առանը այդ նորածնութիւնից չկամեցանք նոր փոփոխութիւն մտցնել շփոթել և առանց զորան շփոթուած ուղղագրութեան ձեւերը: Բայց մենք հաւատացած ենք, որ հայոց զրականութիւնը, օրէյօր ենթարկուելով եւրոպական զրականութիւնների ազգեցութեան ու նորանոր գաղափարների ծաւոլման, հարկազրուած կ'լինի այդ ձեւերը ընդունել:

Իմ ազնիւ բարեկամներ, ես մտածում եմ, որ մեր նոր լեզուի քերականական և ուղղագրական անկատարութիւնը առաջ է զալիս մեր զպրոցական խակութիւնից. Հայկական խելքը գեռ չէ ստեղծել իւր համար զպրոց կառավարող գրականական ճաշակների: Զե՞զ է մնում ստեղծել այդ զպրոցը:

Ահա ինչու ուրախ սրտով ու հայեացքով մօտենում եմ գէպի Ձեզ որպէս դէպի մի կանաչավայր, ուր այնքան յոյսերի նշոյներ ծիածանագոյն փայլում են տակաւին անփորձ սրտերում,—մի կանաչավայր եմ ասում, ուր բնութիւնը արարիչ և աղատ ոյժերով ստեղծագործում է մարդ, որ և սա լինի արարող և աղատ, հեռու նախապաշար կարծիքներից:

Այս, իմ հոգեկան քաղցրութիւնը ինձ կրկնապատիկ է երեսում այժմ՝ մանաւանդ երբ միտս են զալիս սորտնից երեսուն տարի առաջ եղած անցքերը: Այն ժամանակ Ռուսաց զբականութեան մէջ աիրում էր սաստիկ ռէալիստիկական ուղղութիւն և տաղանգաւոր, բայց ծայրացեղ Պիսարեվը իւր կրիտիկական յօդուածներով շանթեր էր արձակում բանաստեղծութեան զլինին, անզամ Շէքսպիրի դրամաները կոչելով Ռեվլաշ հօշիներ և հա-

սարտկ մաշակարին Պուշկինից վերագրասելով: Այն ժամանակուայ երիտասարդութիւնը, որի ախտերը բուռն են, բայց կամքը թոյլ նոյն Պիսարեվի բացասութեան դժներով ներկուած, ոչ ուրախութիւն պատրաստեց «Լեսնի Վշտին», որ այսօր ահա լի զամբիւզով պատրաստել էք Դուք: Սակայն ես, ցաւելով պէտք է յայտնեմ ձեզ որ ձեր այդ ուրախութեան թելը, այնքան մատղաշ ու սիրող ձեռներով մանած, շուտով միջաբեկ կ'լինի, որով հետեւ անցածի և ներկոյի յիշողութիւնները շատ կէտերով մօտենում են միմեանց և ստիպողաբար առաջս ընկնում, որ զոցա մասին խօսեմ: «Մի խոռվեսցին սիրուք ձեր»:



օտար աշխարհներ, սեպհականում են և օտար սովորութիւններ. նոքա, այսպէս ասել, յետ կենալով ազգային ընաւորութիւնից, չեն կարող Փիդիօգիկական օրէնքի զօրութեամբ, միանգամայն ընտելանալ և ձուլուել օտար տարրերի հետ: Այսակեղեց առաջ է գալիս և մի անքնական երեսյթ: Նոքա, նախանձելով եւրոպական սոցիալական կեանքի գիրազանցութեան, աշխատում են քաղելդորա արտաքին կեղեր և ոչ զորա ներքին վերանորոգող



ոչ հասարակութիւնը պատրաստ էր այնքան, որ փոքր իշտէ զնահատէր իւր մտաւոր մշակներին: Նա գեռ շատ հեռու էր այն զիտակցութիւնից, որ պատերի ու տատերի սարք ու կարգով մնալ անկարելի էր, որ ժամանակները փոփոխում են, ծաղում են զանազան պահանջներ, և այն ազդը, որ անտես է անում գորանց և բաւականանում է ներկայով, երբէք չէ կարող ունենալ լաւ ապագայ:—Ամեն մարդ ասլում է իւր համար: Շատերը, Պանդորայի բարիքներից կտացած, աւելորդ էին համարում օգնել կարօտեալ աշխատաւորներին, այլև չարապէս զործ էին գնում միջոցներ լուսաւոր գաղափարների ընթացքը խափանելու<sup>1</sup>: Մեր Հայերը, Հայրենի երկրից հեռանալով

<sup>1</sup> Դեռ երիտասարդութեան օրերից աւելի սէր զգալով դէպի նոր լեզուն, սիրով կապուցի դորա բանակի հետ, որի զինուորները փոքրաթիւ էին: Բայց հէնց սորանով ատելի եղայ այն պարոններին, որոնցից մի քանիսը բաւական էին համարում մերենալաբար պաշտպանել հնութիւնը, և մի քանիսը պրակտիկաբար հայերէն Խօսալ միայն. իսկ զործել ու մտածել՝ աւելորդ բեռք նոյն Հայի համար: Եւ որովհետեւ

այդ երկու կուսակցութիւնների կարծիքը համապատասխան էին միմեանց, այսինքն, եթէ կարելի է այսպէս ասել, աւելի նպաստում էին հալութեան անգործութեան, քան թէ հալութեան գործողութեան, — սկսեցին չերծութեամբ հալածել ինձ: Սոցանից պէտք է լինէին, որ, երբ 1865 թ. «Աւոնի Վիշտը» աշխարհ տեսաւ, ծածուկ բողոքեցին Լազարեան ճեմարանի հոգաբարձու՝ Խաչատուր Լազարեանին, որ և առանձին նամակով պատուիրեց այս գործը քննելու ալստեղի համալսարանի պրօֆեսօր և զիրնկոր ճեմարանի իվան Կանդրատիչ Բարսին: Ահա այս ոուս մեծաւորն էր, որ, ջառագովելով իմ օգտաէտ ծառապութիւնը, կարողացաւ չըել Վերոյիշած անբաստանութիւնը և փրկել ազգաքը Հայերի ծոռքից: Եւ, եթէ համեստութեան կանոնին ընդունմ չէին և նոր նիւթ չղառնայ նախանձորդների լեզուին, ապա կարող եմ արձանագրել և այ. Բարսի պատասխանի վերջին տողերը, որ նա ուղարկել էր Հոգաբարձուին: „Օհծ լոօնմօ Յւում զաւծենիմօ; Յերինչեն, Վետենի Յուլում զաւծենիմօ?“

Փոքր չաշխատեց նոյն բանի համար և մեր հալրենակից Սովորէս Բուզաղեան, որ Հոգաբարձուի մօտ տեսնելով «Աւոնի Վիշտը» կարմիր մատիսով խալիսած, ասել էր նորան. «Վեհազնեայ, այդ լաւ մարդերի զործ չէ» և ապա զերել էր ինձ. «Իսկ դու մի վախենար, մի շեղուիր քո մտքերից ու ծանապարհից»:

Բայց և այժմ թող չպղտորուի քո յաւիտենական քունը, ո՞վ ազնիւ հալրենակից: Ես իմ կեանքիս արևելքին, որապէս և զորա արեմուտքին, և մակաչափ չեմ ծոռւել իմ բոնած ուղղութիւնից: Ալո՞, ես չեմ փոշմանում և ալսօր, որ չորեքմած ման զալու շնորհ չունեմ, հետևաբար չունեմ և դելիքինների յատկութիւնը, որոնք հասալիկ, բայց ձարագիկ մարմնով, մերծ ջրի տակին, մերծ ջրի երեսին, զիտեն ծովի և ժամանակի ալիքների հետ լո՞ղ տալ միասին:

իրէաները: Եւ ոչ մի բան այնքան չէ վնասում աղջային զարգացման, որպէս այդ արտաքին ձևերի հետեւղութիւնը: Այս է պատճառը, որ մեր պատուական հայրենակիցներից շատերը, հեռանալով օտար աշխարհներ և սոյս դէն քցած փշրանքը հաւաքելով, իսկոյն երեակայում են իւրեանց եւրոպացի և մտածում են, թէ էս ինչ հեշտ բան է եւրոպացի դառնալ. և երբոր հարկը պահանջում է իւրեանց եւրոպականութիւնը արդիւնաւորել, նոքա էլի ընկնում են առաջուայ վիճակի մէջ և ապա աւելի ոխերիմ թշնամի են հանդիսանում ամենայն առաջազիմութեան: Այնուհետեւ դոքա իւրեանց ընչին մասափառութեան շնորհիւ միանգամայն հովանում են մայրենի լեզուից ու եկեղեցուց, ապա հազիւհազ սկսում են կմկմալ պապերի ազօթքը. «Խրիստոս խարեւաւ». «Խայր մեր»: Այդ այն ուանդի հայերիցն են, որ հանդէսներում պատահելով միմեանց, եթէ մինը անզգուշութեամբ հայերէն խօսի, միւսը, գորա մատը հուալ տալով, ինչպէս պրկոցի մէջ շշնջում է. «Սու-ուս. սուս. կարող են լսել»: Այդ տեսակ մարդիկ իւրեանց պատուաւոր հային միշտ վերջին տեղն են առաջարկում, եթէ սա չընի ծանօթութիւն մեծամեծների ու աղաների հետ, բայց մի օտարի գեագա տեսնելիս, իսկոյն առաջ են վազում, որ գլուխ տան նորան: Այդ պարոնների լեզուն ջրազայի նման յար և հանապազ հայութեան համար է շարժվում, բայց դոցա ձեռը երբէք չի շարժվում երկու-երեք սև փող նուիրել սիրած ազգին: Գիտեն դոքա մէծ մէծ փրթել, բայց շատ բարակ կտրել, այնպէս որ և կտրածը անզամ չի երեսում: Ամեն մի գրուած, եթէ որ և կտրածը անզամ չի երեսում էժանազին հայրենասէրներին փառաբանութիւն, ննիթարկվում է անհամ զրապարտութիւնների: Դոցա բախտից դուրս են գալիս և մի տեսակ զրապէտներ, որոնք, ձայների և դործարանների ներդաշնակ մասներ, որոնք ձայների և դործարանների նկատմամբ առաջ գալիս են առաջնային հայ, որովհետեւ համար հայ է ծնած, սկսում է նոյնպէս պահանջել բարձ ու պատիւ. բայց գոքա ամենելին չին ուզում հասկանալ որ հայ ծնելը, որպէս և Ռուս և Անգլիացի, մի առան-

նսաներին: Երբեմն կչէալով կտերը նստած կեչեղակի պէս և երբեմն ծածկաբար ճռուալով ինչպէս ձբուէկը խոտերի միջին, դոքա հեղինակներին անարժանապէս մեծացնում են և անարժանապէս ցածացնում: Դոքա չեն հասկանում, որ կրիտիսել, կրիտիկայի ննթարկել նշանակում է ոչ գովասանել, ոչ վատաբանել, այլ միայն ընկնելի դործի խսկական արժեքը որոշել, պարզել: Ես համոզուած եմ, կամ համարեա համազուած, որ դոցանից շատերը առարկայի երեսը անզամ չեն տեսել, այլ այնպէս, լսովի, ուրիշի խօսքերիցն են դատում: Զորօրինակի, թաթոսը՝ առաջնին իմաստուն, ասել է Մաթոսին՝ երկրորդ իմաստունին, թէ այս ինչ շարադրութիւն այսպէս է և այնպէս. իսկ սա, որովհետեւ ուզում է հռչակուել, սկսում է անվերջ սողեր զորել լեզուի կամ թղթի վերայ. անտարակցյա, յետոյ զորվում է և ինքը, ինչու որ ասածը սուտ եր:

Մեր ժամանակը փոխանցական է, այսինքն հինը դեռ արմատախիլ չի եղած, իսկ նորը դեռ խոր արմատ չի ձգել.—և տիրում է մտաւոր անկարգութիւն: Այդտեղ սկսում է մի տեսակ բարոյական մրցում, տուանիր, նման միջնազարեան տսպեաներին: Նախագասութիւնների մէջ առաջնին տեղը բանում է առաջնին գէմը՝ ես, և հոլովվում է բոլոր հոլովներով, եղակի և յոդնակի: Գրականները քրախնկ են թափում միմեանցից խլելու առաջնութեան գափիւնին և որքան աղքատ են զինով ու հոգով, այնքան թունդ են սկսում զընզըչալ:—Դոքա զրականական առիւծներն են, բայց իսկապէս առիւծներ չեն, այլ միայն առիւծների հագած: Այդ հոգեոր անիշխանութեան մէջ բանը այնտեղն է համառում, որ ամենայն հայ, որովհետեւ համար հայ է ծնած, սկսում է նոյնպէս պահանջել բարձ ու պատիւ. բայց գոքա ամենելին չին ուզում հասկանալ որ հայ ծնելը, որպէս և Ռուս և Անգլիացի, մի առան-

ձին առաքինութիւն չէ, այլ բնական խաղ կամ դէպք,  
ուր մնաց, որ դոքա և շատ անգամ նախատինը են բե-  
րում իւրիանց ազգութիւններին։ Ասացէք, ինդրեմ, որ  
անդիացին, և մոծակի պէս ազգի ճակատը ծակելով, և  
բուզայի պէս զորա ինքնասիրութիւնը խեթիկելով, կ'հա-  
մարձակուի վարձ ու դափնի պահանջել իւրայիններից։

Տարաբախտաբար, այս մեր մէջ մի սովորական ե-  
րեցիթ է։ Սորա պատճառը պէտք է որոնիլ այն հան-  
գամանքում, որ մարդս իւր ֆիզիօգիկական ու հոգեբանա-  
կան կազմուածով մի փոքր աւելի կարծիք ունի իւր մա-  
սին, քան թէ է. իսկ այդ մի փոքր աւելի կարծիքը, կա-  
մաց կամաց զնալով, յետոյ պատուակի պէս պաշարում  
է նորա խելապատակը, այնպէս որ վերջին մարդը միշտ  
երկակայում է որ ինքն է առաջնոր, ինչպէս որ հոգհակէս  
հիւանդը կարծում է որ ուրիշներն են հիւանդ։ Բայց այդ  
անձնավկայութիւնը միայն վկայում է, որ իսկապէս վեր-  
ջնոր ելի ինքն է։

Դուք, անտարակցյա, չէք կարող ձեր զարմանքը չա-  
փաւորել որ ես այժմ խօսք բաց արի հասարակաց վշտե-  
րի մասին, որ այնքան արտանուադ պիտի հնչի ձեր յըն-  
ծալից կեցցէների դէմ։ Զգիտեմ, երազումն եմ տեսել թէ  
զրքերում կարգացել միայն միտս են այս հետագայ խոր-  
հրդաւոր խօսքերը։ «Բուռն ծափահարութիւններ, ծաղ-  
կահիւս փնջեր ու համբջյներ զեռ սիրոյ և գիտակցու-  
թեան նշան չեն։ և Խոկարիովտացին համբուրեց իւր սի-  
րելի Վարդապետին... Յորելեանը բարեկամութեան փոր-  
ձաքարն է. յորիլեարը տօնից առաջ իւր բարեկամների  
թիւը համարում է հարիւրներով, բայց յորելեանից յե-  
տոյ կարողանում է համարել միայն ճկոյթից սկսած մին-  
չև մեծ մատը, — մէկ, երկու, երեք։ Մարդիկ, մոլի կլքերից  
յափշտակուած, մոռանում են այն հանգամանքը, որ դա-  
ղափարներով տուուառուր անել, որպէս չարչին մաստաքով,

նշանակում է կորյնել մարդկային արժանաւորութիւնը։  
Սորանից յետոյ, թէ քնած էի, քնից վեր թռայ, թէ  
զիրք էի կարդում, զիրքս խփիցի. — այսպէս վերջացան այն  
խորհրդաւոր խօսքերը։ Կասկած չկայ, ազնիւ բարեկամներ,  
որ այս ողէշունչ տօնին ոքմին լինի գարանազործ։ այն  
սեերես նախանձը, ուղեղը ջարդուած, երկու աչքը կօր.  
այն խախալը լիք երկպառակութեան հատիկները, անկա-  
րելի է, որ այժմ, մեր լուսաւոր ժամանակներում, նորից  
զլուխ բարձրացնեն և նորից սկսն աւերման գործը. մա-  
նաւանդ այստեղ, Մոսկուայում, ուր ապրում են այնքան  
աշխարհատես ջեսովլին հայեր, կրթուած և զտուած եւ-  
րոպական նուրբ ճաշակով ու սովորութիւններով։ Միւս  
կողմից գժուար է մտածել որ հայաստանցիք մեղան-  
չեն. որոնք, թէ են անտեղեակ են մեր բարձր ուսման, բայց  
լաւ տեղեակ են իւրիանց ազգային սրբութիւններին և  
կարող չեն մասնակցել լուսաւոր աշխարհների Փանդե-  
րին ու օյինբազութիւններին։ Եւ արդարեւ. մի ժողովուրդ,  
որ մնած է հայրենիքի սրբավայրերում։ որ հանապազ  
աչքի առաջ ունի այլեար Մասիս՝ մշտափայլ աղամանը  
զազամիւն, լուսակաթ - շողակաթ էջմիածինը, Մեսրովեայ  
և Սահակի նշխարքը, երկնագոյն ժապաւէնը  
կտմ Արագածի համասփիւռ կապերաը Անիի աւերակներով  
միասին, — մի այլպիսի ժողովուրդ ինչո՞ւ պիտի նենդէք  
իւր սրբավայրերի լեզուին։ Դուցէ տեսածս կամ կարդա-  
ցածս մի օպտիկական խաբէութիւն է, ուղեղն ասեմ, ես  
էլ մի կասկածոտ մարդ եմ. չեղածը եղած եմ համարում

<sup>1</sup> Ասում եմ «Ծրասի» և ոչ «Արաք»։ և հարկաւոր էր հայ-  
կական մայր-գետին իւր ընիկ անունը պահել և ոչ լատինացած ձևով  
հնչել։ Եթէ բնաստեղծին ներելի է աղատօրէն «Արաք» գրել, և այն  
կանգիկական ելեւջների համար, ամենեւին աններելի է հասարակ մահ-  
կանցուին այդ տեսակ օսար ոժերով մանուկ սերունդը դաստիարակել,  
որ հակառակ է անձնահանաչութեան զգացունքին։

և չեմ հետեւում Դաւիթ Անյաղթի փիլիսոփայութեան, որ ասում է «ոչ կարելին ոչ դոլ», —անկարելին չի կարող լինել կամ ոչ կարելին չի լինում: Եյս բոլորը այսպէս է արդարեւ. բայց այնու ամենայնիւ այն կախարդական գուշակութիւնը անջնջելի տպաւորուել է սրտիս մէջ. վիշտ է զրգուում, արգելք է դառնուում լիովին ձայնակցել ձեր ուրախութիւնը: Ասում եմ ձեզ որ վիշտը լաւ բան է. այն ազգը որ վիշտ չունի, ոչ առաջապիճութիւն ունի և ոչ փրկաւէտ ապագայ: Քաղաքակրթութեան բոլոր արդիւնքը վշտի հետեանք է: Մարդկային քաղցրութեան ու դառնութեան ամենագեղեցիկ շաղկապը սէրն է, բայց սիրոյ շաղկապը էլի վիշտն է. սորա շնորհիւ առաջ է գալիս և այն գիտակից հայրենասիրութիւնը, որ լոկ բացականչութիւն չէ, այլ ուշալական զոհաբերութիւն, հոգու և մօքի պահանջ: Ես չեմ խօսում անապատականների - ասկետների մասին, որոնց կեանքը վշտով է սկսվում և վշտով վերջանում: Մեր ասած վիշտը հասարակաց պակասութիւններ ու հարցերն են, որոնք, հրապարակախօսութեան նիւթ դառնալով, ապա պարզում են մեր նիստ ու կայի պայմանները և այդպէս զադար չեն տալիս, որ պատուական ոսկին՝ մարդկութիւնն բանականութիւնը, ժանգոտուի: Տեսնում էք. վիշտը ձեր ոգեստութեան քնարի զլխաւոր լարն է, սա է, որ ամբողջապէս ամիսովում է իւր մէջ այդ քնարի ներդաշնակութիւնը: Թոյլ տուէք, ուրեմն, որ այլ ևս քաշեմ վշտի լարը. դորս տուալը գեռ շատ երկար է:

Մեր Ճառի մէջ չկայ կուսակցական ոգի, բայց կամեցողների համար թող այլպէս լինի. հայելին մեղաւոր չէ, եթէ սա ցոլացնում է իւր մէջ նայողի ֆիզիկական պատկերը, և ոչ մեղաւոր է զրիչը, եթէ կարդացողը նրամարում է իւր հոգեկան զծերը: Որպէս մի Ճառի պառզներ թէ փոքր թէ շատ նման են միմեանց, այսպէս և մի

ուղղութեան, մի սիստեմի մարզիկ նման են միմեանց: Մեր խօսքը ընդհանուրի վերայ է և ոչ մասնաւորի: Եւ այն հրապարակական խօսքը, որ կուսակցական ոգով է զրած, կորցնում է իւր կշեռը, զրկվում իւր նշանակութիւնից:



պայմանապէս պէտք է լինեն աղնիւ, առանց խարդախութեան, առանց մաքիաւելիզմի: Ազատամտութեան վերայ խօսելը շատ հեշտ է, հրապուրիչ, բայց իսկապէս ազատամիտ լինել շատ գժուար: Ճշմարիտ ազատամիտը ոչ թէ զրում է թանաքով, որ զրած է նորա առաջ, այլ եթէ կարելի է այսպէս ասել, իւր կինդանի ջղային հիւթերով այսինքն ինքը գրողը պատկերացնում է իւր ներքին մարդը այնպէս, ինչպէս որ նա կայ: Սյորինակ միայն կարող է ձուլուել մարդուս մէջ այն հաստատ անկիւնաքարոր, որ ասվում է համոզմունք, սրտի վկայութիւն, մոքի համաձայնութիւն. — այն, որ պարզեւում է աշխարհին հանճարներ, քանիքարներ, հերոսներ ու նահատակներ: Իսկ մենք բնաւորութեամբ այնքան զիւրափոփոխ ենք, որ համոզմունք ասած բանը խնծորի պէս զորում ենք ձեռէծեռ և զանազան գյոներ ընդունում, նայելով թէ արեգակի լոյսը որ կողմից է ընկնում երկրի վերայ. երբ հարկաւոր է, առաջազեմ ենք, երբ հարկաւոր չէ, յետադէմ: Սորանից պարզ է, որ ճարպիկ յօդուածներ զրելը ու ճարտար խօսելը գեռ չէ նշանակում ազատամիտ լինել և համոզմունքի տէր: Եւրոպական պարլամենտական կեանքը ներկայացնում է այդտեսակ բազմաթիւ հուետորներ, որոնց միակ արժանաւորութիւնը իւրեանց պերճախօս սուտն է և ծամածուռ խօսքերի հոսանքը: Եւ ուղիղն ասել, այդ հուետորները նման են նունենու ծառերին, որոնք գարնան այնքան խիս ու պարարտ ծաղիկ են բռնում: որ ասես թէ աստեղափայլ երկինք են փոխվում, մի թեթև քամու պատահելով այդ երկինքը շուտով փոխվում է երկիր, ցիրուցան գեղնած և անպառուղ ծաղիկներով: Եւ մեր սերունդներից շատերը, իսկ և իսկ նմանելով նոր յիշած ծաղիկներին, առաջ երազախար ազատամտութիւն յանձն առնելով, ապա հովանալով դորանից, որպէս սառցից, այսօր մի պատահական ասադի



անուկ սերունդը ամենեին չպիտի հետեւ այն այլանդակ եղածացութիւններին, որ երկրորդ զիսում յիշեցի. վաստակաւորին բաւական է իւր վաստակի գիտակցութիւնը. հետեարար բարին ու աղնիւը իրան նպատակ է և չէ պահանջում վարձատրութիւն: Վայ այն ազգին, այն մարդերին, որոնց արած բարութիւնը չէ ծագում առաքինութեան գաղափարից, այլ ուրիշ պայմանական հաշիւներից: Սյդ տեսակ բարութիւնը մի երկաւականի, երկմեծանի բան է, որպէս ձեռնածուների (աշքակապ) անօթներն են. մի երեսին բարութիւն, միւս երեսին վարձատրութիւն:

Իմ սիրելիք, միայն այն սերունդն է արժանի կեանքի ու պատուի, որ իւր կեանքը չէ խնայում հասարակաց զոհաբերութեան համար: Դուք, որ կայսերութեան օրէնքով վայելում եք ազատամիտ կրթութիւն, պէտք է ազատ մնաք ամեն եսական ձգտումներից: Եւ ազատամիտ կրթութիւն, ազատամտութիւն ասելով, ևս հասկանում եմ աղնուամտութիւն: Սյս տեսակէտից աղնուամտութիւնը պէտք է, որպէս կարմիր թեր, անցնի ազատամիտ մարդու արարքից. սորա և դործ ածած միջոցները ան-

պէս անհետացել են երկնային, այսինքն երկրային տարածութեան մէջ:—Սյդ պատճառով և մայրէնի զրականութիւնը, որ գոքա խոստանում էին զարդարել ամենիմաստ գիտութիւններով, տակաւին ծանրացած է հնացած և անմատչելի նիւթերով: Համալսարանական ձրազը, որ հրավառ փարոսի պէս ուղեցոյց պիտի լինէր նորածիլ զրականութեան, չառւեց այն լոյսը, որին կարօտ էր այդ գրականութիւնը. նոյն անձանօթ և անձանապարհ լարիրինթն է, որ պաշարում է գորան մինչև այսօր: Ես չեմ ասում, որ համալսարանականների մէջ չեն եղել և չկան կրթեալ և պատռական մարզիկ. ընդհակառակն, եղել են և կան աղնիւ, անձնանուեր մտածողներ, որոնց անունները արձանապրած են հայկական լուսաւորութեան տարեգրում: Վերջապէս անյայա չէ մեզ և այն հանգամանքը, որ հայոց զպրոցներում, որպէս ուրիշ ասպարէցներում, կան այնպիսիներ, որոնք անփարձ մշակի պէս չեն խնայում ոչ տաղանդ, ոչ ջանք իւրեանց կոչումը իրագործելու, սակայն գորանց թիւը, համեմատութեամբ ուսանողների բազմութեան, փոքր է և նուազ: Սյօրեան մշակների մեծամասնութիւնը պատկանում է տեղացի կամ եւրոպական համալսարաններում վերածնած դրածիչներին, որոնց խմբագրութեամբ տիրապէս և շարժվում է հրատակութեան խօսքի անիւր՝ մամուլի և զրականութեան:

Մեծ միխթարութիւն է, որ ասես թէ ներկայ ուսանող սերնդի մէջ աւելի է նշանագում շարժողութիւն: Չեմ կարծում, որ այսօրեան ոգեշնչունչ բարբառը հայկական լեզուի գեղեցկութեան հետ ծածկուի ձեր շրթունքին որպէս կապարեայ զազալում: այլ ընդհակառակն, դոյն հայկական լեզուն կ'կախարդէ ձեզ այնպէս, որ ոչ վրէժինը դրանութեան աստուածուհին, ոչ թշնամու նենազաւոր պաքը կարող է թաւալել գետին: Սյօր, ես կամենում եմ հաւատալ, որ այսօրեան սերունդը աշխատում է իւրա-

ցնել ժամանակիս առաջաւոր իդեաները և այդպէս մօտենալ քաղաքակիրթ կեանքի էական կազմակերպութեան, որ միակ ճանապարհ է տղիտութեան զէմ: Սյդ զիտակցութեան շնորհիւ այսօրուայ սերունդը զգայիւն և կենդանի արամազրութեամբ ականջ է զնում և իւր հայրենիքի ցաւերին և ուրախութիւններին, հետաքրքրվում է և գորա ընթացիկ հարցերով: Ընթացիկ հարցերից մինը է և կաթողիկոսական խնդիրը, որով այնքան զեազուած է և մամուլը, և ժողովուրդը, և Դուք, աղնիւ հանդիսականներ:

Եւ այստեղ թող ներելի լինի մեզ մի համեստ խորհրդացութիւն անել: Եթէ հայը սիրում է իւր ազգային եկեղեցին և պարծենում է լորանով, որպէս իւր նախահարց յիշատակարանով, արդեօք մտածում է, որ կրօնն ու եկեղեցին կարող են հաստատ մնալ միայն ազգի կենդանութեամբ: Եկեղեցին է ազգային հաւաքական յժերից մինը, ուրեմն հարկաւոր է, և անհրաժեշտ հարկաւոր, հոգտանել և այն միւս յժերի համար, խնամել սնունդ տալ և գորանց, ապա թէ ոչ գոքա կարող են մեծավերջական աղէտքի հանդիսակել: Սրգեօք մեր հայ եղբայրները, որոնք սորանից մի քանի օր առաջ զիմում էին եկեղեցին խուռն բազմութեամբ ծխական և թեմնիկան պատզամաւորներ ընտրելու, մտածել են կամ մտածում են մեր միւս կենսական խնդիրների մասին, թէ գոքա այդ լոկ ընտրութիւնով արդէն վերջացած են համարում իւրեանց հայրենասիրական պարագն ու հաշիւր: Կարծեմ, տարաբախտաբար, հինյ շատերը այդ համոզմունքի տէր են: Ես սորանով ամենեին չեմ կամենում զիազել ձեր բարեպաշտական նպատակներին. ես միայն պնդում եմ, որ հայկական եկեղեցին մնայ իւր ցանկալի բարձրութեան վերայ, որ մեր քրիստոնէական խիղճը, գերեզման մտնելիս, մեզ չխայթէ, որ, վերջապէս, դոյն իսկ խիղճը պատասխանա-

տու չմնայ այն առաքելաշաւիդ հարանց առաջև, որոնք  
տասնեւից գարերի ընթացքում, անլնդհատաբար յաջոր-  
դելով միմեանց, աւանդեցին մեզ այս խնկելի՛ հայտատա-  
նեաց Եկեղեցին։ Աշա թէ ինչ երկարող ձանապարհ է  
դրած մտածող հայի առաջև, մի՛ որ աջողութեամբ առաջ  
տանի բարեգործական, դպրոցական - կրթական և արհես-  
տագիտական խնդիրները, և երկրորդ՝ հաստատ պահէ իւր  
գարեոր կազնին՝ Եկեղեցին, աղջի հոգեոր կեանքով մշակ-  
ուած և գեղեցիկ յիշատակարաններով սրբագործուած։



¶¶.



յս այսպէս լինելով, պարզ  
որոշվում է և ապագայ  
Հովուապետի նշանակութիւնը։ Ամենայն հայոց կաթողի-  
կոսը իւր միազինապետական Աթոռով, այսպէս ասել, է  
համահայկական Եկեղեցական կեանքի շահերակը. սորանից,  
որպէս կենդրոնից, արձակվում են երկրորդական և երրոր-  
դական երակներ կրօնական լուսաւորութեան և Եկեղեցա-  
կան վարչութեան։ Ամենայն հայոց կաթողիկոսը, անկա-  
շառ և անսասան ախտեան մնալով Լուսաւորչական  
Եկեղեցու, պէտք է շրջանկատ աչքով հետեւ և ժամա-  
նակիս հարկաւոր պահանջներին. պէտք է տշխատէ կար-  
ճել և այն զեղծումները, որ ստուեր են ձգում հայկա-  
կան Եկեղեցու մաքրութեան վերաց և գորանով նպաստում  
են օտարին մեր միութիւնը խրամատելու։ Ես հասկանում  
եմ, որ լոկ հրամաններով վերջ գնել կրօնական զեղծում-  
ներին անկարելի է. այդ զեղծումները, դարերի ընթաց-  
քում, այնպէս ընտելացել են ժողովրդի կեսնքի հետ, որ  
զորա հաւատալիքների մի մասն են կաղմում. անզօր են  
զորանց դէմ մաքառելու և համահայկական կամ տիեզե-

բական ժողովները՝ սկզբումը սահմանող ու սահմանագրող նորատունի քրիստոնէութեան դաւանաբանութեան։ Տիեզերական ժողովների ժողովուրդը այժմ չկան։ Ես մինչև անդամ հակամիտ եմ կարծել որ այդ տեսակ փոքր էր կարող են նորանոր հերձուածներ և պատառմունք պատճառել մի ազգի, որի անդամները և առանց դորան բաժանուած են միմեանցից տարածութեամբ և հասկացողութեամբ։ Օտար ազգերը, որոնց զլիսին թագ կայ և ձեռին վարող իշխանութիւն ու միաւորիչ շաղկապներ, տակաւին բեռուած-մնացած են նըն իսկ կրօնական զեղծումների վերայ, թողնելով դորանց ժամանակի վերակրթիչ հոսանքին, մինչև որ սա օդնութիւն հասնի մարդկային ընկերութիւններին և ցնցէ այդ կանգնած ջրերի մակարդակը։ — Մեր քաղաքական անձնաւորութիւնը իւր եկեղեցական փոփոխութիւններով աւելի ձեռնաու կ'լինի հզօրին, քան թէ մեզ։


Այս այսպէս է արդարեւ. բայց չայոց չայրապեար, պաշտելի և մեծահեղինակ հայրապեար, կարող է մասամբ այդ զեղծումների առաջը առնել և առանց շօշափելի բեկման։ Սորա համար նա պէտք է աշխատէ բարւոքել ուսումնարանների վիճակը, պատրաստել լրւսուոր հովիւներ, արխաջան, աշխարհագէտ քարոզելու, որոնք մի կողմից կենդանի հաւատ մասակարարելով ժողովրդին, միւս կողմից պարիսպ քաշեն ընդդէմ օտարապաւան պրօպագանդական ձգտումներին, որ մեր օրերում մի տեսակ հարուստ պաշար է զառել հաւատավայտառութեան, որովհետեւ փողով են առնում, փողով ծախում։ Սյատեղ, ակամայ շեղուելով, մի երկու լուսէ կանգ ենք առնում այն բանի վերայ, թէ ինչպէս միստիօներական ընկերութիւնները առհասարակ հետացել են բուն աւետարանական ճանապարհից և որպիսի հակաքրիստոնէական ընթացք են բռնել։

Բոլոր աշխարհը զիտէ, որ չայերս կեթանոս չենք, այլ քրիստոնեայ, և ամենից առաջ քրիստոնէութեան լշար ընդունող։ Սպա ինչու համար են քարոզում չայերի մէջ քրիստոնէութիւն։ Սւետարանում չէ ասած. «Գնացէք, այսուհետեւ քարոզեցէք Սւետարանը քրիստոնէաների մէջ և հաւատացած ու մկրտուած քրիստոնէաներին կրկին քրիստոնեայ մկրտեցէք յանուն հօր, և Որդւոյ, և հոգւոյն Սըրբոյ։» Բայց, որովհետեւ դոցա խօսքը իւրեանց եկեղեցու գերազանցութեան մասին է, և մենք պէտք է ասենք չայոց եկեղեցու պատուի համար, որ այդ եկեղեցին, թէ իւր դաւանաբանութիւնով, թէ ծէսերով, համեմատաբար աւելի է պահպանել սկզբնական քրիստոնէական պարզութիւնը։ Մեր կրօնական-արքաթիկական նպատակներով խճճուած ժամանակներում նա այնքան ազատասէր է, որ օտարներին անգամ թւում է տարօրինակ։ Ինքը Դեռլինգէր զերմանացին, ազատ մտածող կաթոլիկ, մաքառելով Պապի անսխալտականութեան գէմ հրապարակաւ խոստովանում է, որ նախնի քրիստոնէական պարզութիւնը չայոց եկեղեցում պէտք է որոնել. որ առաջին երեք տիեզերական ժողովներում քրիստոնէութիւնը արդէն ձուլուեց և հաստատեց, որպէս յայտնի կրօնական վարդապետութիւն։ Իսկ այս մեր եկեղեցու առաւելութիւնն է։ Սպա ի՞նչ են կամենում այսօր այդ նախանձախնդիր պրօպագանդիստները։ Գուցէ այդ քարոզիչները, իբր թէ առաքելաշորհ, բայց առաքեալների շնորհից զրկուած, կամենում են որ մենք աւելի ուղղափառ լինենք։ Բայց այդ շնորհը մեզ բնաւ հարկաւոր չէ։ Հայաստանիայց եկեղեցին, թէ եմուրների սմբակներից ազատաւած, այնպիսի մարտիրոսական պսակ է կրում իւր ճակատին, որ հաւատացեալ հայր կարող է քաղել դորանից հոգեւոր միսիթարութիւն և, իւր նահատակների նուիրական երգերը սազմոսելով, երկնքի գոները բանալ երկրի վերայ։ Այն, հայաստանեայց

Եկեղեցին, տարաբախտ, բայց հզօր իւր քաղաքական փոթորիկների մէջ հանսապաղ կրել է այդ պսակը, սպիտակ փշերից հիւսած. և երբ որ գոռող թշնամին աւերել է նորա վարդի բուրաստանը, այն նահատակների արեան կաթիլները վարդի տեղ են գնացել: Սորանից յետոյ ի՞նչ ասեմ մեր հայրենակիցներին, որոնք, «փոփոխելով զօրէնս և մարգարէս», ճանձի պէս ընկնում են որսորդների ցանցը և այդպէս մատնում են մայրենի եկեղեցին երեսուն արծաթով:

Նոր կաթողիկոսի ուշադրութիւնից չպէտք է թագչի և այն հանգամանքը, որ հոգեորական դասը կարօտ է խիստ կարգապահութեան, առանց որի խախտվում է ամենայն կարգ ու կանոն, այլ և, հակառակ դէպքում, պատճառ է զառնում մեծամեծ գայթակղութիւնների ժողովրդի մէջ: Անհնազանդ քահանան կամ եպիսկոպոսը պէտք է իմանան, որ իւրիսաց կոչումը չէ թելազրում վեհին հակառակել. այդ՝ նախ ընդդէմ է աստուածային ըրէնքին, որ ինքեանք են մեզ ուսուցանում, և երկրորդ՝ հայրենասիրական գործ չէ եկեղեցու խաղաղութիւնը վերդովել մեր բազմավտանդ ժամանակներում, ուր և առանց դորան շատ արգելքներ կան իւրեանց հայրապետի Ճանապարհին: Բայց նորընտիր կաթողիկոսը այս բոլորը կարող է տնօրինել և յարմարել խորին հասկացողութեամբ ու ալական գաղափարների բուն եւրոպական մըտքով ու ոճով, որով միայն հնարաւոր է, ինչպէս ասում է գրոց լեզուն «յամբոկ գործոյն ժամանել»: Գոնէ այս իսկ եւրոպական եղանակով են գործել և հին ժամանակներում, երբ մեր թմրած ոյժերը նոր կենդանութիւն ստացան և ոչ մի արիութեան հրաշք չթողին, որ չկատարեցին: Թէ եկեղեցական, թէ քաղաքական ասպարէզներում կատարուած յաղթանակները եւրոպական վերանորոգիչ ոգու հետեւանք են: Հայաստան, Ասիսի և եւրոպայի

միջավայրը բռնելով, իւր ընտիր մասնով միշտ ունեցել է մի առանձին հակումն զէպի եւրոպան: Այնինչ մեր շըրջակայ ազգերը, մասամբ անհետացած, մասամբ լետարգիկական քնի մէջ ընկղմած, պատմութեան համար մնացել են լոկ յիշելի բաներ, հայերը իւրեանց ազնիւ եւրոպական յատկութիւններով և այսօր ևս զրաւում են լուսաւոր աշխարհների համակրութիւնը:



պարտական է այն հանգամանքին, որ նա ապահովել է իւր վարժապետի վիճակը, ծառայութիւնից յետոյ նշանակելով դորան և հանգստեան թոշակ, որպէս պենիօն, որպէս Նմբիքառ-շա: Մեր առաջնակարդ ուսումնարաները, չեմ խօսում երկրորդականների մասին, միանգամայն զուրկ են հաստատուն պայմաններից: Այդ են կենում ասմանեակ տարիներ և կէս գարեր դոյցա Հիմնարկութեան օրից, բայց զիսաւոր դորձը մնում է նոյնպէս տարտամ, նոյնպէս անորոշ, որպէս սկզբումը. այնինչ ուսումնարանը, որպէս կենդանի օրդանիզմ, պէտք է բնի և ածի կեանքի նորանոր երեսյթների հետ, և ոչ անփոփոխ ու անշարժ մնայ, որպէս Խոլամի մշղրէսէն:

Ներկայ դարուս առաջն քառարդին, երբ հայկական ուսումնասեր բարքի ծաղիկը, ասես, թառամել էր. երբ Մայր Աթոռը, ներքին ու արտաքին վէճերով ջլատուած, հեծում էր բարբարասների լծի տակ, մի հայ եպիսկոպոս, պատկանելով այն հազուազիւտ և հետասես մօրգերի շարքին, որոնց համար թանկ են հայրենի բարցյական շահերը, հիմնում է Կովկասի կենդրոնում ուսումնարան, որ, փոխանակ վանքական—աստուածաբանական ուղղութեան, պիտի աւանդէր հայերին մտածողութեան նոր եղանակ, նոր մանկավարժական սիստեմ: Ներսիսեան զըպրանոցը, որ համարեա երկը քառարդ գար սպասաւորում է ազգի մանուկների մտաւոր կրթութեան, գալնուելով մի այնպիսի քաղաքում; որպիսի թիֆլեզն է, ունենալով իւր շուրջը այնքան ինտելիգենտ և զրամատէր մարդիկ, ունենալով ասմաներկու մեծարգոյ հոգաբարձու. թեմակալ առաջնորդի նախագահութեամբ,—Ներսիսեան զպրանոցը անգամ ոչինչ հոգատարութիւն, ոչինչ ազգողական առաջարկութիւն չէ արած պենսիօնի խնդրի մասին, որով միայն կարող էր հաւաքել իւր մէջ ազգի ընտիր ոյժելը և սոցանով առաջ առաջ առաջնել բազմակողմանի



ոյն իսկ եւրոպական ոգու ազգումով դառնում ենք դէպի մեր լուսաւորութեան ազբիւրը—ուսումնարանը: Այստեղ ես չեմ կարող չնկատել մի շատ կարեռ և էտիկան հանգամանք, առանց որի անկարելի է, որ կանոնաւոր գաստիարակութիւն մեր մէջ հաստատուի: Աւելի հեշտ է պատերազմով մեծ քաղաք առնել քան թէ մի փոքրիկ ուսումնարան շինել, համապատասխան ժամանակակից մանկավարժական պահանջներին: Ուսումնարանը պէտք է լինի ուսումնարան, և ոչ ժամանակաւոր օգեգործուած մարդկերի ժողովարան: Մինչեւ որ ուսուցիչը,—այդ կենսական ոյժը ուսումնարանի, — չինի համոզուած, որ նա նիւթապէս ապահոված է ոչ միայն վարժապետութեան, այլ և ծերութեան շրջանում, երբ քրայ կ'տան սե օրեր և պէս պէս տկարութիւններ, — չէ կարող դա լիաման նուիրել իւրեան ստանձնած պաշտօնին: Ահա այս է պատճառը, որ նա, հաստատ նեցուկ չզտնելով ստէպ ստէպ փոխվում է տեղէտեղ թափառական աստղի նման: Եւրոպան, որ իրաւամբ պարծենում է իւր ուսումնարանների հսկայական առաջադիմութեամբ, բացառապէս

մանկավարժական գործը: Ինչ որ ասացինք Ներսիսեան դպրանոցի մասին, ասելի է և Մայր Աթոռի Ակադեմիայի վերաբերութեամբ, որ նշյալէս խախուտ և երերուն վեճակի մէջ է, և սորա վարժապետական խումբը շատ նման է ծովի մշտածուփ, մշտաշարժ ալիքներին, անդադար փոփոխելով միմեանց և անհետանալով: Սորանով մենք չենք կամենում ասել, որ ուսուցիչներին առհասարակ պակաս էին զործելու եռանդ և դաստիարակչական համբերութիւն, ընդհակառակն, դոցանից շատերը, որոնց և մենք անձամբ ծանօթ ենք և գիտենք դոցա անտրասունջ կենցաղավարութիւնը, բարեխզծութեամբ աքնում են մեր զաւակների կրթութեան վերայ: Այլ նոյն անյայտութիւնն է, նոյն աղքատութեան սպառնալիքը, որ հարկ են դնում մեր ուսուցիչների վերայ որոնել դանել ապագայում փոքր ի շատէ ապահոված զրութիւն, ժամանակաւոր, և ոչ յափանական հանգիստ:

Ո՞քան տարբեր է իւր նիւթական գերազանցութեամբ սոցա անդրանիկ մրցակից՝ Լազարեան Ճեմարանը, — այդ անկողոպտելի արձանը հյուակապ Լազարեանների, որի լուսաւոր յարկի տակ անցել են և իմ աշակերտութեան և երեսնամեայ վարժապետութեան օրերը: Սորան փարելի որդեկի պէս փայփայելով նոյն մեծանուն տոհմը, հազար հազարներ կտակեց և գրեց անսայթաք ճանապարհի վերայ: Այն խաւար տարբիներում, երբ դեռ ևս ծաւալուած չեն հայրենազիտութեան տեղեկաւթիւններ, այդ տոհմի շառաւիդները, արդարե որպէս լուսաւոր աստղ, փայլեցին հայկական երկնակամարին: Գործելով որպէս մագնատ, որպէս մեծատուն, ոչինչ չխնայեցին դրա իւրեանց անտերունչ հայրենեաց համար և այդպիսի արդիւնարար առաքինութեամբ փակեցին իւրեանց նազելի աչքերը: Եւ թող Աստուած լուսաւորէ այդ մեր ծնողների հողին:

Իսկ մեր կովկասեան զարոցներում, փոխանակ ընդ-

հանուր ապահովութեան վերայ մտածելու, այնպիսի կարգեր են տիրում, որ վաղուց արդէն պէտք էր յանձնել դորանց գիւանական հնագրութեան, որպէս մի անաքրոնիզմ: Զորօրինակի, մի վարժապետի հարկաւոր է ոռջիկ աւելցնել բայց աւելուած չկայ. այդպիսի գիւպուածում ի՞նչ են անում զեկավարները. նոքա միւս վարժապետների ոռջիկոց կտրում են և աւելացնում մէկին: Բայց այդ մի ուրիշ բան չէ, քան թէ «Տրիակոնտակաֆտան», կամ ինչպէս ասում են. «Ալիի փափախը Վալիի զլիսին ծածկել»: Եթէ մի կազմից անբաւարար համարեցինք նորաւարտ ուսանողների մասնակցութիւնը լուսաւորութեան գործին, միւս կողմից անարդարութիւն կ'լինէր չնկատել, որ և հասարակութեան և զարոցական հոգաբարձութեան վարմունքը միանգամայն օտարուի պատկեր են ներկայացնում: Այդ երեւում է մեր զարոցների ամենօրեայ բիւլլետէնից: Դիցուք, մի զարոցում նշանակվում է նոր վարժապետ կամ նոր տեսուչ և ահա սկսում են ամեն դեկից օվանաններ կարդալ նորան. բայց անց չէ կենում երկու-երեք ամիս, և իսկցին դրան շտապով ճանապարհ են ձգում, որպէս մի անպէտք մարդու: — ի՞նչպէս է պատահում այդ: Պատահում է այդ այն պատճառով, որ հոգաբարձուները մեծ մասամբ անընդունակ են իւրեանց գործում և չեն հասկանում այն սուրբ պարտականութիւնը, որ պիտի կապէր զորանց զարոցական կեանքի հետ: Անուհեան զոցա կամապաշտութիւնը զանում է արգարութեան միակ դասաւոր. այդտեղ, ինչպէս զրել էր մեզ մեր բարեկամներից մէկը պատահում է շատ անդամ, որ և առանին փսփսանքը, և հօքիրների ու մօքիրների հէքաթները, և բազարից եկած խարարները ներզաշնակորէն կատարում են իւրեանց գերը: — Եւ այս մի ցաւալի իրողութիւն է, որ ջլասում է ուսումնարանի ցյժերը, խանգարում ամեն եղանակ ու հետեակցութիւն մանկա-

վարժական շըջանում: Բայց թոյլ տուեք և ինձ ասել ձեզ բարեմիտ հոգաբարձուներ: Ի՞նչ հարկ կայ ձեզ կեանքի հոգսերով վարակել այդ խաղաղ մանկական տաճարը: Ի՞նչ հարկ կայ զանութեան բաժակով թունաւորել միամիտ երեխաների օրերը, որոնք ամենայն մասամբ հեռու են ձեր մեղքերից: Հոգաբարձուն, ճշմարիտ հոգաբարձուն նա է, որ, մարզափրութեամբ ողեղուած, զիտէ խնամել փայփայել զպրոցը, որպէս իւր հարազատ որդեակին: Սէրը մի ուրիշ իրաւունք չունի, քան թէ ներել և սիրել:

Միենցն զպրոցական թերութիւնները անալօգիկաբար նկատելի են և մեր միւս մեծամասն կիսում: Տաճկաստանի հայերի մէջ: Այսակել ևս նոյն հայրենասիրական պարաքը, նոյն ռէալական պիտոյքը բարձի թողի են արած: Պոլիսը, ուր կենդրոնացած են այնքան հայկական ցյժեր թէ մատոր, թէ նիւթական կարողութեամբ, հանապազ շփուելով եւրոպացիների հետ և սոցա մեծամեծ քաղաքները յաճախելով,—Պոլիսը աւելի խելամուտ պիտի լինէր եւրոպական կարգերին, այսինքն հետեւ և իրագործել պենսիօնի խնդիրը, գէթ իւր զիսաւոր զպրոցների համար: Չեմ խօսում այն հանգամանքի մասին, որ Պոլիսը մինչեւ այսօր չկարողացաւ կամ չկամեցաւ հաստատել իւր մէջ ոչ թէ մի բարձրագոյն ուսումնարան, որպէս Լիցէօն կամ Ակադեմիա, այլ մի միջնակարգ Գիմնազիա ըստ ամենայնի համապատասխան եւրոպական տիպին: Խօսելով մերայինների ընդհանուր կրթութեան մասին Տաճկաստանում, մենք պէտք է խոստովանենք, որ այդ կրթութեան սիստեմը գնում է հնացած հասկացողութիւններով: Այնտեղ մանուկների դաստիարակութեան համար կան միայն կրթական բանասիրական զպրոցներ: Այնինչ ներկայ կեանքի պայմանները այնպիսի հարցեր են առաջարկում, որ անհնարին է անտես անել: Այժմ


բոլոր եւրոպական երկիրներում կարօտութիւն կայ բացի կլասիկական գպրոցներից բանալ և տեխնիկական, պրօֆեսիօնական գպրոցներ, որով ազգային տնտեսութիւնը ստանում է ընդաձակ շըջան: Եւ որքան յաջողել է այդ աշխարհներին այս նոր ուղղութիւնը. բոլոր համաշխարհական հրապարակները թափուած է զոցա ապրանքով, որոնք և տասնապատիկ վարձատրում են իւրեանց աշխատաւորին: Այս տեսակ կրթութիւնը աւելի զգալի է Թիւրքիայում: Մահմեդական տէրութիւնը իւր նեղ կրօնական սահմանափակութեամբ անձեռնհաս է կրթական սկզբունքներից, բայց քրիստոնեայ ազգերին, հայերին և Յոյներին, աններելի է մի այգալիսի զանցառութիւն: Մի աշխարհ, ուր գյութիւն ունեն միայն ուսումնական-զպրոցական բաժիններ, կէս մարմնով միայն կենդանի է և մեծ վասագ կայ, որ ժամանակով և այդ կէսը զըկուի կենդանութիւնից: Կենդանութեան համար երկու բան է հարկաւոր մարդում՝ մտաւոր և նիւթական հարստութիւն: Կազմել արհետական-տնտեսական զպրոցներ, որպէս հիւսնագործ, շերամապահ, զինեզործ, ներկարար, և առհասարակ մեքենայագործ և ձեռագործ կերտուածների,—նշանակում է խաղաղ և շահաւես վաստակով տէր զառնալ այն հողին, որի վերայ ապրում է արդինարարը: Արհեստական և տեխնիկական գպրոցների կազմութեամբ կ'հարստանայ և Թիւրքիայի գանձարանը նորանոր բաժերով ու հասերով, այլ և առեւտրական աշխարհի շուկաները կ'լցուեն նոյն աշխարհի բերքերով: Գուցէ Պոլիսը այդ բոլորը անկարելի է համորում այժմ, տինարկելով ներկայ խստութիւնները. բայց կար ժամանակ, երբ զեռ կապած չէին առաջնորդներն ու մարզարեք, և ոչ տակաւին ծանրացած հայկական կղակների վերայ տաճկաց պրկոցը: Աակայն ես մտածում եմ, որ և այժմ ուշ չեմ: Հալածանքը, որ Թիւրքիան յարուցանում է իւր հայ հայ հպատակների վերայ, ժամանակաւոր

է: Թիւրքիան շուտով կ'զգաստանայ և բաց աչքով կ'տեսնէ, որ հայ տարրը կենսագործիչ միջոց է իւր համար. պէտք է միայն սանձահարել արիւնիկեր Քրդերին և աշխարհակեր վալիներին: Վերջապէս և Ալբիոնի որդիքը, որոնց յանձնուած է վերանորոգել Արմենիան, կ'արթնանան երկար թմրութիւնից: Անգլիացին շտա զգաստ է, եթէ մէկը դիպչէր իւր պատուին, և հանսապաղ պատրաստ է արարած աշխարհը տակնուվրայ անել միայն թէ վրէժը հանէր: Ապա ի՞նչպէս կարող է նա այլ ևս լռել երբ վերանորոգել Արմենիայում արդէն կատաղի ոտնահարութեամբ տրոբել են ամեն մարդկային զգացմունք, ամեն հասարակական և ընտանեկան պատիւ: Թող ուրեմն ազատամիտ մինխարութիւնը Գլազունի, որ ծերութեան հասակում տածում է երիտասարդական աշխոյժ ու եռանդ, անյապաղ ձեռնամուխ լինի վերանորոգութեան գործին:

Գուցէ մէնք, Թիւրքիայի իսկական պահանջները չեմանալով, աւելի կամ պակաս խօսեցինք, սակայն գորա մեղքը մերը չէ, այլ այն կցկատը տեղեկութիւններն են, որ հասնում են մեզ: Լուսաւոր Եւրոպան այժմ մտածում է բանակցել անդամ երկնային մոլորակների հետ, իսկ Թիւրքիայի հետ յարաբերութիւնները, կամ գուրս չեն գալիք Ստամբուլի պարիսպներից և կամ, գուրս գալով, իսկոյն մոլորվում եմ Պոնտական ծովում և անհետանում: Միւս կողմից մեր ազգայինները նոյն հանգով են նստում ու վեր կենում, որպէս և մէնք: Այնուեղ հրապարակական հաշիւներ դպրոցների և ուրիշ հաստատութիւնների մասին, մանաւանդ ասիական նահանգների վերաբերութեամբ, կամ ամենեին չկան, կամ, եթէ կան, ոչինչ բան չէ կարելի հասկանալ դոցանից: Թող այս ժողովներ են գումարում այս և այն գործի մասին, արձանագրութիւններ են կազմում, ապա, ստորագրելով, ամեն մարդ հանգիստ

իւր տունն է գնում, իսկ սկսած գործը մնում է ապար-դիւն. կարծես թէ սկսում են նորա համար, որ գործը երբէք զլուխ չգայ: Ինչպէս երեսում է, մենք չայերս գործադրելու ընդունակութիւն չունենք:


Բայց պենսիօնական կասսի հաստատութիւնը և պրո-ֆիսիօնական գպրոցների սկզբնաւորութիւնը իրագործելով, Թիւրքիայի հասարակութեան սպասում է նոր դարապլուխ և նոր ուղղութիւն:



բախտալրար, չնկը կարող հաստատել, որ դոցա կէսը կամ  
կէսի միւս կէսը արած լինէինք մեր ազգի համար: Այնինչ  
ժամանակը թոշունի պէս առաջ է վազում և չէ սպա-  
սում չային, որ սա զանգաղ քայլերով համնի իւր ե-  
տեից. այն ինչ ժամանակը հրամայաբար պահանջում է  
ապահովել մշտական թոշակով ուսումնարանների վիճա-  
կը: Այո, և մեզ պէտք է թևաւորուել և զերբնական  
ջանք գործ գնել, որ չենթարկուենք մեծամեծ փորձանք-  
ների և աշաւոր թուխպերի: Այո, և մենք պարտական  
ենք, յանուն մեր պատուի ու մարդասիրութեան, հար-  
թել մեր վարժապետների երկրաւոր կեանքի քարքարու-  
ծանապարհը:

Ապագայ վեհափետը թող և վեհափառ  
թելլողով և խնամակալ հանդիսանայ այդ հանրաշահ  
հաստատութեան, որի իրագործութեանը, անսարակոյս,  
կաջակցէ և կրօնասէր հայ ազգը: Եւ իրաւի. եթէ հոգու  
անմահութիւն և յաւիտենական երանութիւն, որպէս  
ուսուցանում է մեզ աստուածախօս Աւետարանը, կարելի  
է գտնել առաքինական գործերով միայն, ապա որքան  
գեղեցիկ և լայն ասպարեզ է բայցում բարեպաշտ մար-  
դերին, թէ կենդանութեամբ, թէ մահից յետոյ, փող  
չմնայել վարժապետների վիճակը ապահովելու և իւր-  
եանց քրիստոնէական վախճանը հանդիսաւոր կերպով  
յաւերժացնելու: Ուրեմն մոտք այսօր, բարեպաշտ մար-  
դիկ, մեր թոռումնած այդին և կենդանացրեք դորա չորա-  
ցած ծառերը: Այդ օրը միայն, այդ հոգեոր և մարմնաւոր  
վերանորոգութեան օրը, մենք ցնծալեց աղաղակներով  
կ'տօնախմբենք, որպէս մի զարազուխ մեր զպրոցական  
կեանքի, որի սպիտակափայլ դրօշակի վերայ կ'կարդանք.  
«Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ»:

Ապա ով է այն վսեմ, բազմահայեաց իմաստու-  
թեամբ զարդարուած անձը, որ, հայրապետական գահը



յսպէս ահա, իմ սիրելի բա-  
րեկամներ, այս փոքրիկ, հա-  
մառօտ նկարագրից կարելի է եղանակակել, որ երկու ևս մաս-  
նում, Ռուսաստան և Տաճկաստան, մեր ազգային դրութիւ-  
նը մեզ չէ տալիս առիթ ոչ օպտիմիստիկական խպլիկնե-  
րով հրապուրուել և ոչ պեսսիմիստիկական յուսահա-  
տութեամբ ճնշուել: Երկու ևս մասնում առաջազիմու-  
թիւնը անսարակցա է, բայց, համեմատութեամբ ներկայ  
դարուս սկայական քայլափոխներին, շատ նուազ: Յայտնի  
բան է, որ մի ազգ, որպիսի մերն է, իւր առաջինաղա-  
ցութեան ճանապարհին անդադար պատահելով օձերի և  
կարիճների, կարող չէ ազատ մնալ դոցա խայթոցներից.  
սակայն բնութեան կարգը այնպէս է, որ ամեն խայթոց  
ունի և զեղաթափ: Մեր զեղաթափը այն է, որ ըոսէ  
անգամ չզագարենք մեր տունը շինելուց: Ուսումնասիրե-  
լով ազգերի պատմութիւնը եւրոպական հողե վերայ, ո-  
րոնց վերևից օգնութիւնն չէ հասել այլ իրանք իրանց  
գլուխն են պահէլ մենք տեսնում ենք այնպիսի ինքնա-  
զործունէութեան և անձնուրացութեան օրինակներ, որ  
մարդուս միանգամայն հիացք է պաշտում: մենք, զըժ-

բազմելով, նոր անմահութիւն կաւետէ Տէր Ներսէս Հինգերորդի և Տէր Գէորգ չորրորդի կոթողներին: Ո՞վ է այն կազմուրիչ և յորգործող բազուկը, որ մեր անտարեկրութեան պատաժքը տեղից շարժելով և հոգեորականներին պարտաճանաչութեան շնորհ ներշնչելով, կարողանայ բարձրացնել հայկական Գահը դէպի նախանձելի բարձրութիւն:

Ասած է. «Որ հանձարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստացի»: Եյդ հանձարեղը է Տէր Մկրտիչ Խրիմեան հայրիկ, որի բոլոր կեանքը առաքինութեան ծաղիկների մի գեղեցիկ շաքք է, որով կարելի է լինէր Երասխի նման ոլորուն գօտի կապել հայրենեաց մէջքին: Սա ըստ ամենայնի յիշեցնում է մեզ Սահակ Պարթեկի սկայական պատկերը կամ Մէծն Մեսրոպի առաքելաշնորհ կենցաղավարութիւնը. «Մտօք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ սիրով անփեղծաւոր, ուսուցանելով անձանձրյթ»: (Խոր. գերք գ. գլ. հէ.)

Էջմիածին, մշտականաչ կիսպարիս, հայաստանի սրաի վերայ անկած: Էջմիածին, հայաստանեաց մրմունջների ընդունարան, ահա գալիս է քո առաքելաշաւիղ փեսան հովուել քո ժողովուրդը և փառաւորել Քեզ:


Ազնիւ հանդիսականներ, գուցէ ես իմ եղբակացութիւններովս սիալուել եմ. խոնարհաբար խնդրում եմ ներողամիտ լինել: Երկինքը առնելով ինձ վկայ, կարող եմ հաւատացնել որ ես խօսել եմ որպէս մի մարդ, երեսնամեայ արմատի վերայ հաստատ կանգնած, և ոչ «որպէս եղէզն շարժուն ի հողմոյ»: Ներեցէք, որ երկար ճառովս պատճառեցի Ձեզ ձանձրութիւն. Հրապարակական ճառը աններելի է թերի և անկատար խօսքերով աւարտել: Ներեցէք, որ չհետեւեցի սովորական շարլօնին, որ պատուիրում է խօսողին աւելի ամնքիչ և հաճցական ձեւել իւր ճառը: Ազնուական սրտերին, աղամանդի բեկորների պէս մոքրափայլ չպիտի ախորժելի լինի լսել շողքոր-

թութիւն, այլ ուղղամիտ և անսեմենթ կարծիքներ. այս նպատակով ինչ որ երեսնամեայ ծանրութեամբ կիտուած էր հոգու ս վերայ, ասացի համարձակ: Մանուկ կամ նոր սերունդ ասելով, ես զլիսաւորաբար շեշտեցի ուսանողական շրջանը. ուսանողները բոլոր աշխարհներում այն թարմ և առողջ ոյժերն են, որոնք, որպէս դարի և ժամանակի դրօշակիր, կրում են իւրեանց մէջ և զարդարութիւնները: Համալսարանն է, որ, մննդարան լինելով վերաբան զիտութիւնների, պարզում է, որոշում է իրերի յատկութիւնը և առնչութիւնը և, այդ օրինակ, մարդկութեան համար հաւասարի կամուրջ է ձգում առաջադիմութեան: Ահա այդ պատուաստը, այդ վերլուծիչ տարրը պակաս է հայոց կեանքին ու զրականութեան: Ես համոզուած եմ, որ եթէ նոր սերունդների ուղղութիւնը հիմնուած լինի բուն աղատամիտ կէտերի վերայ, — ոչ աղղութեան ձեւական կողմերը պաշտպանել այլ դրա ձեռք ու ոտք տուող միջոցներին ծառայել — այն ժամանակ կարելի է յուսալ որ մեր անձնաւորութիւնը, մեր աղգային եկեղեցին ապահոված է վտանգից և միջաղղային մրցումներից:

Վերջացնելով խօսքս, աւելորդ չեմ համարում առաջ բերել այստեղ մի հրապարակախօս եւրոպացու ճառի համասուս բովանդակութիւնը, որ սա ասել է իւր ունկնդիր մանուկ սերնդին, և որի անունը, տարաբախտաբար, մոռայել եմ: Եյդ Ճառի մէջ այնպիսի մեծակշեռ խորհրդածութիւններ կան, որոնց հետ վատ չէր լինիլ և մեր սերնդին ծանօթանալ: Ահա մօտաբար այդ Ճառի բռվանդակութիւնը:

«Իմ մանուկ ունկնդիրներ, իմացէք որ ես իմ Ճառովս չեմ կամեցիլ ոչ Զեր սէրը գրաւել, և ոչ Զեզ նոր սէր ներշնչել: Իմ միակ նպատակը այն է եղել որ նոր սերունդը աղատ մնայ հին սերնդի խաւարային Ճանա-

պարհներից և նորա կանխակալ սովորութիւններից: Բայց  
եթէ նոր սերունդը միայն տարիների թւով է համար-  
վում նոր, իսկ մոտածութեան եղանակով նշյն է, ինչ որ և  
հինը, այդ նշանակում է հին գինին նոր տկի մէջ ածել  
կամ հին ախտմորով նոր խմօր ունցել: Նոր սերունդը, աղ-  
նուացնելով իւր սիրալ, իւր հոգեռը ցյժերը, ունի միայն  
գաղափարական ծշմարտութիւն հասնել հետեւաբար դորա  
կեանքի բովանդակութիւնը իդէաները պէտք է լինեն և ոչ  
զէնքերի գարդակ շառացնեն, ուր պատերազմի դաշտը  
մնում է նոյնպէս, որպէս և առաջ էր, ոչ մի վէրք, ոչ  
մի զնհ, ոչ մի յաղթութիւն: Աստուած իմ, Աստուած  
իմ: մի՞թէ և նոր սերնդի ուղեղի գիծը ծուռն է, ինչպէս  
և հնինը, և այդ պատճառով բաւական անհաւասար  
պտոյտներ է անում»:



## ՎԵՐԶԱԲԱՆ


Մենք այս գրքի երրորդ գլխում յայտնել էինք  
այն միաքը, որ վաստակաւորին, եթէ դա ունի մի որ և  
իցէ լաւութիւն, բաւական է արդէն այդ լաւութեան  
զիտակցութիւնը և սորանից աւելի ոչինչ հարկաւոր չէ  
նորան: Այդ զիտակցութիւնը առաջնորդում էր և մեզ  
մինչև ներկայ հանդէսը: Տասնեակ և աւելի տարիներ ինձ  
առաջարկում էին մի այդպիսի հանդէս, և, որովհետեւ  
այդ աեսակ հանդէս ու հանդիսաւորութիւն, հակառակ  
են իմ հասկացողութեան, ես հրաժարվում էի դորանից.  
սակայն վերջին առաջարկութիւնը կրում էր և բարեգոր-  
ծական սկզբնաւորութիւն,—ես համաձայնիցի դուրս գալ  
իմ համեստ գերից և ընկնել այս ժամանակին մէջ: Զեր  
առաջ զրած «Յորելինական տպաւորութիւններ» այդ  
քաղցր աղմկի նկարագիրն է:

«Յորելինական տպաւորութիւններ» սկզբում բազ-  
կացած էին միայն առաջին գլխից, որ պիտի խօսուեր  
առաւատեան յարեկանի հանդէսին, որպէս առաջին ճառ.  
բայց մի օր առաջ ծագեցին այնպիսի հանդամանքներ, որ  
ես ստիպուեցի խօսել երկրորդ ճառը, առաջինը թողնե-  
լով ճաշին կարգավու: Եւ այստեղ առաջ եկաւ նոյն հան-  
գամանքների ներգործութիւնը, որ վախ ու տագնապ աղ-  
եց հանդիսականներին, ասես թէ սիւնազարդ սրահի պա-


տերից քաջքեր էին նայում: Թէև այդ երեակայութեան խրտուիլակները արգելք եղան ճառախօսութեան, բայց ամենեին արգելք չեղան ինձ ընդարձակել «տպաւորութիւններս» վեց զլուխ: Այդ օրը ես նշանակեցի յորելիանիս առաջին տարեգրի մէջ, որ է 1892 թ. 9-ին Ապրիլի: Ահա նոյն օրը, տասներկու ամիս պտտուելով աշխարհի երեսին, նորից զարձաւ մեր աշխարհը գարնան եղանակի հետ, — եղանակ մարմնաւոր և հոգեոր վերանորոգութեան: Անցան այն խրտուիլակները, հանդարտեցին մոքերը, որպէս հանդարտում է և ծովը, որ մի փոքր առաջ մրմռում էր գաղանի պէս, բայց այժմ միայն մարդարախ շարեր են խաղում նորա կապուտակ մակերեսութիւն: Ահա և մանուշակի ու շուշանի թիկերը գարձեալ սկսան բուրել անուշահոտութիւն և թունակները գարձեալ աղատ հնչել իւրեանց կանաչահիւս վանդակներից ծառերի վերայ: Եթէ և մեր մատածողութեան մէջ, մեղմիկ ծփալով և օրօրուելով, այն մարդարախ շարերն փայլէին: Եթէ և մեր սիրա աղատ ու անկեղծ հնչեր սկը և միաբանութիւն:

1892 թ. Ցունիս—Օդոստոս.

Տաւրիկեան թերակղի,  
Ալոհակո գինը.



### ԲՈՎՈՆԴԱԿՈՒԹԻՒՆ



|  |    |
|--|----|
| Մանուկ Սահամեանցի լիշտակին նույր . . . . .                   | 5  |
| Յորելեանի ծառ . . . . .                                      | 6  |
| Ս. Նազարեանցի լիշտակին . . . . .                             | 12 |
| Վերջին փափադ . . . . .                                       | 14 |
| Պանդուխտ հոգի (նույր Ս. Նազարեանցի լիշտակին) . . . . .       | 16 |
| Հանգած բնար . . . . .  | 19 |
| Անգին գոհար . . . . .  | 22 |
| Յ. և Թ. Տէր-Յակոբեաների հարսանիքի բանհինգամեակին . . . . .   | 24 |
| Զոհեր . . . . .  | 27 |
| Բանաստեղծի դամրանին (նույր Ս. Սահամեանցի լիշտակին) . . . . . | 29 |
| Յորելինական տպաւորութիւններ . . . . .                        | 31 |
| Վերջարան . . . . .   | 76 |





Ընդունված  
1992



